

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային տեղեկատու

ԹԻՎ 148

ՀՈՒՆՎԱՐ 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 2

Կյանքի իրավունք

Ոստիկանության սպային հրաձիգ տրամադրելուց առաջ պատշաճորեն զննման չենթարկելը, որը հետագայում օգտագործվել է ճակատագրական հրաձգության ժամանակ՝ խախտում
Grovenky v. Bulgaria / Գրովենսկին ընդդեմ Բուլղարիայի, 36146/05, 42418/05-----2

Սպանություն, որը կատարվել է պայմանական վաղաժամկետ ազատ արձակված դատապարտյալի կողմից՝ խախտում չկա
Choreftakis and Choreftaki v. Greece/ Շորֆտակին և Շորֆտակին ընդդեմ Հունաստանի, 46846/08-----3

ՀՈԴՎԱԾ 3

Խոշտանգում, անմարդկային վերաբերմունք

Անձի հանձնումը Կոնվենցիայի Անդամ Պետություն չհանդիսացող պետությանը՝ խոշտանգումներից հետո՝ գործի հանձնում Անձ Պալատին
El-Masri v. "the former Yugoslav Republic of Macedonia" /Էլ-Մասրին ընդդեմ «Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետության», 39630/09-----6

Անօրինական միգրանտի բռնաբարությունն իր նկատմամբ հսկողություն իրականացնող ափամերձ պահակի կողմից՝ խախտում
Zontul v. Greece / Զոնտուլն ընդդեմ Հունաստանի, 12294/07-----6

Սայլակին գամված բանտարկյալից պահանջվել է իջնել և բարձրանալ չորս աստիճանավանդակ՝ կյանքի համար անհարաժեշտ բժշկական օգնություն ստանալու նպատակով՝ խախտում
Arutyunyan v. Russia / Արությունյանն ընդդեմ Ռուսաստանի, 48977/09-----9

Զինվորական ծառայությունից հրաժարվելու համար՝ ռազմական կալանավայրում պահվող Եհովայի վկայի նկատմամբ վատ վերաբերմունք՝ խախտում
Feti Demirtas v. Turkey / Ֆեթի Դեմիրտասն ընդդեմ Թուրքիայի, 5260/07-----10

Էքստրադիցիա

Harkins and Edwards v. the United Kingdom / Հարկինսը և Էդուարդսն ընդդեմ Մեծ Բրիտանիայի, 9146/07 և 32650/07-----12

Նվաստացուցիչ պատիժ

Vinter and Others v. the United Kingdom / Վինտերը և այլոք ընդդեմ Միացյալ Նահանգների, թիվ 66069/09, 130/10 և 3896/10-----15


Հոգեկան խնդիրներ ունեցող անձանց հատուկ սոցիալական տան պայմանները՝ խախտում
Stanev v. Bulgaria / Ստանենն ընդդեմ Բուլղարիայի, 36760/06-----18

Բանտարկյալին համապատասխան օրթոպեդիկ կոշիկներ չտրամադրելը՝ խախտում
Vladimir Vasilyev v. Russia / Վլադիմիր Վասիլյեվն ընդդեմ Ռուսաստանի, 28370/05-----18

Հոդված 6

Հոդված 6 § 1 (քաղաքացիական)

Դատարանի մատչելիություն



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Դատարանի ուղղակի մատչելիության բացակայություն գործունակության վերականգնում պահանջող անձի համար՝ *խախտում*
Stanev v. Bulgaria / Սթանեն ընդդեմ Բուլղարիայի, 36760/06-----20

Առանց փաստաբանի ներկայացած հոր բացակայության ժամանակ, ծնողական իրավունքներից զրկման որոշումը վիճարկելու քայլերի համար տեղեկատվության տրամադրման մերժում. *խախտում*
Assuncao Chaves v. Portugal / Ասունսասո Չավեսն ընդդեմ Պորտուգալիայի, 61226/08-----25

ՀՈՂՎԱԾ 6 § 1 (քրեական)

**Արդար դատաքննություն
Վտարում**

Իրական վտանգ, որ երրորդ կողմի նկատմամբ խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցը ընդունվել է դիմումատուի գործի վերանայման ժամանակ՝ վտարումը կարող է հանգեցնել *խախտման*
Othman (Abu Qatada) v. the United Kingdom / Օթման (Աբու Քաթադա) ընդդեմ Միացյալ Թագավորության, 8139/09-----27

ՀՈՂՎԱԾ 6 § 2

Անմեղության կանխավարկած

Vulakh and Others v. Russia / Վուլախ և այլք ընդդեմ Ռուսաստանի թիվ 33468/03 -----30

ՀՈՂՎԱԾ 8

Պողիտիվ պարտավորություններ

Անձնական կյանքը հարգելու իրավունք

Բնակարանի անձեռնմխելիության իրավունք

Իշխանությունների տևական թերացումը՝ աղքատության, դրա հավաքման և վերամշակման կառավարումը իրականացնելու համար՝ *խախտում*

Di Sarno and Others v. Italy / Դի Սարնոն և այլք ընդդեմ Իտալիայի, 30765/08-----31

ՀՈՂՎԱԾ 10

Արտահայտվելու ազատություն

Փոխհատուցում սեռական բռնության զոհ դարձած երեխայի անձը թերթի հոդվածում բացահայտելու համար՝ *խախտում չկա*

Kurier Zeitungsverlag und Druckerei GmbH v. Austria / Կուրիեր Ցայթունգսվերլագը և Դրուքերեյ GmbH ընդդեմ Ավստրիայի, 3401/07-----33

Թերթը և նախկին երդյվալ ատենակալ անդամը մեղավոր են ճանաչվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար և տուգանվել ատենակալների խորհրդակցության գաղտնիությունը *խախտելու համար՝ անընդունելի է*


Seckerson and Times Newspapers Limited v. United Kingdom / Սեկերսոն և Թայմս Նյուսփեյփերս լիմիտիդ ընդդեմ Միացյալ Թագավորության, 32844/10, 33510/10-----34

ՀՈՂՎԱԾ 11

Հավաքների և միավորման ազատություն

Ցույցերի արգելքի օրինական հիմքերի հետադարձ ուժի վերացումը՝ *խախտում*

Patyai v. Hungary / Պատյին ընդդեմ Հունգարիայի, 35127/08-----36



Եկեղեցու աշխատակիցների արհմիության գրանցման մերժում՝ խախտում
I.M. v. France / F.U. ընդդեմ Ֆրանսիայի, 9152/09-----37

ՀՈԴՎԱԾ 35

Իրավական պաշտպանության

ներպետական արդյունավետ միջոց

Դատական ընթացքի տևողության և չկատարված վճիռների մասով N 87 Օրենքի ներքո
փոխհատուցման պահանջ՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց
Balan v. Moldova / Քալանն ընդդեմ Մոլդովայի, 44746/08-----39

ՀՈԴՎԱԾ 46

Պիլոտային վճիռներ

Ընդհանուր միջոցառումներ

Պատասխանատու Կառավարությունը պարտավոր է ընդհանուր բնույթի միջոցառումներ ձեռնարկել
կալանքի տակ պահելու վայրերում պայմանները մեղմացնելու համար
*Ananyev and Others/et autres v. Russia / Անանևը և այլոք ընդդեմ Ռուսաստանի, 42525/07,
60800/08*-----41

Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված

Գույքի անարգել օգտագործումը

Դիմումատուների թռչակների կրճատումը՝ կենսաթոշակային սխեմայի փոփոխության արդյունքում
Torri and Others v. Italy / Տորին և ուրիշներն ընդդեմ Իտալիայի, 11838/07, 12302/07-----43

Թիվ 4 Արձանագրության 4-րդ հոդված

Ազատորեն տեղաշարժվելու իրավունք

Miazdzyk v. Poland / Միազդզիկն ընդդեմ Լեհաստանի, 23592/02-----45

ՀՈԴՎԱԾ 2

Կյանքի իրավունք

Պոզիտիվ պարտավորություն

Ոստիկանության սպային հրաձիգ տրամադրելուց առաջ պատշաճորեն զննման չենթարկելը, որը հետագայում օգտագործվել է ճակատագրական հրաձգության ժամանակ. խախտում:

Gorovenky and/et Bugara v. Ukraine

Գորովենկին և Բուգարան ընդդեմ

Ուկրաինիայի

թիվ 36146 /05 և թիվ 42418/05

Վճիռ 12.01.2012թ. [5-րդ բաժանմունք]

Փաստերը

Դիմումատուի ազգականները սպանվել են հրաձգության հետևանքով, երբ ոստիկանության աշխատակիցն իր աշխատանքային պարտավորությունների կատարման ավարտից հետո ներգրավվել էր վիճաբանության մեջ և կրակ էր բացել իր ծառայողական զենքով, որը, ըստ երևույթին, նա միշտ կրում էր: Ոստիկանության աշխատակիցն ուներ ակոհոլի չարաշահման, անկարգապահության և բռնությանը հակված լինելու նկարագիր:

ԻՐԱՎՈՒՆՔ

2-րդ հոդված

Գործը քննվել է Պետության կյանքի իրավունքի պաշտպանության պոզիտիվ պարտավորության ներքո, քանի որ հրաձգության ժամանակ ոստիկանության աշխատակցի աշխատանքային պարտավորություններն ավարտվել են և նա

ներգրավված չէր ոստիկանության ծրագրավորված օպերացիայի կամ հետապնդման մեջ: Ներպետական իշխանություններն ընդունել են, որ մի քանի դեպքերում ոստիկանության աշխատակցի վերադասը պատշաճորեն չի գնահատել նրա անհատականությունը և թույլատրել էին կրել զենք՝ չնայած նախկին մտահոգիչ միջադեպերի: Ավելին, ազգային օրենսդրությունը հստակորեն արգելում է զենք տրամադրել ոստիկանության այն աշխատակիցներին, ովքեր չեն ապահովում անվտանգ պահպանության համապատասխան պայմաններ և եթե երբևէ չի ստուգվել, թե որտեղ է ոստիկանը պահում զենքը իր բնակարանում: Հնարավոր է, որ զենքի անվտանգ պահպանման պայմանների չապահովումն էր հանգեցրել նրա մոտ զենքի անընդհատ՝ անգամ աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակից դուրս պահելուն: Դատարանը կրկին հաստատեց, որ Պետություններից ակնկալվում էր ներդնել բարձր մասնագիտական չափանիշներ իրենց իրավապահ մարմինների համակարգում և ապահովել, որ այդ համակարգերում ծառայող անձինք համապատասխանեն պահանջվող չափորոշիչների: Մասնավորապես, ոստիկանական ուժերը զենքերով համալրելիս՝ ոչ միայն անցկացնել անհրաժեշտ տեխնիկական մարզումներ, այլև զենք կրելու թույլտվություն ունեցող աշխատակիցների ընտրությունը ևս պետք է լինի հատուկ ուշադրության առարկա: Սույն գործով առկա էր երկակի թերացում. ոստիկանը զինված էր զենքով ներպետական ի խախտումն ներպետական կանոնադրությանը (առանց անվտանգ պահպանության ստուգման), և նրա անհատականությունը չէր պատշաճորեն չէր գնահատվել իր կողմից կատարված

կարգապահական իրավախախտումների պատմության լույսի ներքո:

Եզրակացություն. Խախտում (միաձայն):

Հոդված 41

12,000 եվրո որչ մնացած չորս տուժողներից յուրաքանչյուրին՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Սպանություն, որը կատարվել է պայմանական վաղաժամկետ ազատ արձակված դատապարտյալի կողմից. Խախտում չկա

*Choreftakis and Choreftaki v. Greece
Շորֆտակիս և Շորֆտակիս ընդդեմ
Հունաստանի
Վճիռ 46846/08, 17.1.2012, [1-ին
բաժանմունք]*

Փաստեր

2008թ.-ի մայիսին դիմողների որդին դանակահարվել է մահվան ելքով: Հանցագործությունը կատարած՝ Զ. Լ.-ն այդ ժամանակ գտնվում էր պայմանական վաղաժամկետ ազատության մեջ: Վերջինս նախկինում արդեն ենթարկվել էր բազմաթիվ քրեական պատիժների՝ ծանր հանցագործությունների համար, որոնցից մեկը ցմահ ազատազրկում՝ փոխարինված լրացուցիչ տասը տարի և ինն ամիս ժամկետով: 2006թ.-ի հունվարին առաջին ատյանի դատարանում քննել է նրա դիմումը՝ իր պատիժների գումարման վերաբերյալ և հաստատվում 26 տարի ազատազրկման ժամկետ: 2007թ.-ի օգոստոսին բանտի տնօրենը դիմում է ներկայացրել Զ. Լ.-ի պայմանական


վաղաժամկետ ազատման վերաբերյալ: Քրեական գործերով դատարանի պալատը մերժել է դիմումը: Զ. Լ.-ն բողոքարկել է այդ որոշման դեմ: 2008թ.-ի հունվարին վերաքննիչ դատարանի պալատը չեղյալ է համարել որոշումը և ընդունել է պայմանական վաղաժամկետ ազատ արձակման որոշում:

ԻՐԱՎՈՒՆՔ

2-րդ հոդված

Դիմումատուների որդու ողբերգական մահը վրա է հասել մի շարք հանգամանքների արդյունքում: Մինչ դժբախտ պատահարը ոչինչ իշխանություններին թույլ չէր տա կանխատեսել, որ տուժողը կարիք կունենար առանձնահատուկ պաշտպանության տակ գտնվել ինչ որ մեկի հանցավոր գործողություններից պաշտպանվելու համար կամ այն, որ նրա կյանքին իրական և անմիջական վտանգ էր սպառնում: Սույն գործը նման է իտալական «Մաստրոմատեո» և «Մաիորանո և այլք» գործերին նրանով, որ կրում է պարտավորություն՝ ապահովելու հասարակության ընդհանուր պաշտպանությունը՝ այն անձանց հնարավոր գործողություններից, ովքեր կրում են կամ կրել են ազատազրկման պատիժ՝ ծանր հանցագործությունների համար:

Հունական համակարգում, պայմանական վաղաժամկետ ազատությունից օգտվելու համար դատապարտյալը պետք է կրած լինի ազատազրկման նվազագույն ժամանակահատվածը, եթե այդ պայմանը բավարարված է՝ օրենքը նախատեսում է, որ «պայմանական վաղաժամկետ ազատումը կիրառվի բոլոր դեպքերում, բացառությամբ՝ երբ անձը դատապարտվել է առանձնահատուկ շարժառիթով, երբ նրա



վարքագիծը, պատիժը կրելու ընթացքում նոր իրավախախտումներ է առաջ բերել»:

Տվյալ դեքում դատարանը կիրառել է համապատասխան օրենսդրություն և հաստատել, որ օրենքով սահմանված պահանջներն ապահովված են:

Այս պայմաններում ակնհայտ է, որ դատական վարույթն իրականացնելիս ոչ մի խախտում չի իրականացվել, որը ի վերջո տարել է հանցանքն իրականացրած անձի պայմանական վաղաժամկետ ազատմանը: Մնում է իմանալ, թե արդյո՞ք Հունաստանում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը որպես այդպիսին նախատեսում է բավարար միջոցառումներ հասարակության ընդհանուր պաշտպանությունը ապահովելու համար այն անձանցից, ովքեր բռնի հանցագործություններ են կատարել և դրա համար կրում են ազատազրկման պատիժ: Հաշվի առնելով Եվրոպական երկրների պայմանական վաղաժամկետ ազատման համակարգերի մեծ բազմազանությունը, այս ոլորտում գնահատման լայն հնարավորություն է նրանց տրված: Սա հատկապես տեսանելի է այնպիսի դեպքերում, ինչպիսին սույն գործն է, երբ Դատարանը պետք է առաջնորդվի՝ հետադարձ հայացք նետելով պատասխանող Երկրում առկա պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի համատեղելիությանը՝ Հոդված 2-ի պահանջների հետ, պայմանական վաղաժամկետ ազատումից օգտվող ծանր հանցագործություն կատարած անձի դրդապատճառով:

Իրականում, հաշվի առնելով ուղիղ պատճառահետևանքային կապի բացակայությունը՝ կիրառված օրենսդրության և դիմողների որդու մահվան միջև, Դատարանը տեղին է համարում որոշել իր

քննության առարկա սահմանել այն թե հունական համակարգը պրակտիկայում ինչպիսի պայմաններում է թույլ տվել իրավասու դատավորներին որոշելու պայմանական վաղաժամկետ ազատման մասին՝ լիովին հաշվի առնելով համապատասխան օրենքով նախատեսված չափանիշները: Այս առումով, հարկավոր է հիշել, որ Կոնվենցիայի նկատմամբ Պետությունը պատասխանատվություն կկրի այն ժամանակ, երբ հաստատված համարվի, որ մահվան պատճառը ազգային իշխանությունների թերացման հետևանք է, այդ թվում օրենսդրական, այն, որ կարող էին ողջամտորեն անել այն ամենը, ինչը կկանխեր կյանքի նկատմամբ իրական և անմիջական վտանգի նյութականացումը, որի մասին նրանք պետք է և կարող էին իմանալ:

Հունական օրենսդրությունը ոչ շատ տարածված, բայց Կոնվենցիայի անդամ երկրներում գոյություն ունեցող համակարգերի մաս է կազմում, որոնցում պայմանական վաղաժամկետ ազատումը կանոն է և դրա գործադրման ժամանակ որոշակի ինքնուրույնություն է կիրառվում:

Դատապարտյալի վարքագծի հետ կապված չափանիշը նրա ազատազրկման ժամանակ, միակ չափանիշն է, որի վրա կարող է հիմնվել իրավասու դատավորը շահագրգռված անձի պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու համար: Բացի այդ քրեական օրենսգիրքը մշտապես նվազեցնում է իրավասու դատավորների որոշմանը ենթակա ժամանակային հորիզոնը, ինչը նպատակ ունի բարելավել դատապարտյալների «լավ վարքագիծը»: Հիմնականում կարգապահական պատիժները ջնջվում են շահագրգռված անձանց անձնական գործից նրա կողմից պարտավորությունը կատարվելուց հետո

վեց ամսից երկու տարվա ընթացքում և այդ դեպքում դրանք հաշվի չեն առնվում վերջինիս պայմանական վաղաժամկետ ազատման որոշման ժամանակ: Այնուհանդերձ, այն ինչ վերաբերում է տվյալ դեպքին, իրավասու օրենսդրական դաշտում կարող են հաշվի առնվել այլ էլեմենտներ՝ Զ. Լ.-ի վարքագիծը գնահատելու համար, մասնավորապես բանտի տնօրենի կազմած հաշվետվությունը, որը հաստատում էր, որ 2004թ.-ից հետո նրա վարքագիծը «շատ լավ» է եղել: Ուստի կարելի եզրահանգել այն բանին, որ հունական համակարգը որոշակի ինքնուրույնություն է թողել իրավասու դատավորի ուսերին, որն էլ բացառել է բանտում Զ. Լ.-ի վարքագիծը գնահատելու հնարավորությունը:

Ցանկալի կլիներ, որ օրենքը դատարանին հնարավորություն տար հաշվի առնելու նաև Զ. Լ.-ին մինչ 2004թ.-ը ենթարկած ուղղիչ պատիժները, այն մասով, որով որ դրանք լուրջ միջադեպեր են հանդիսացել, որպեսզի դատարանը հնարավորություն ունենար ավելի լիարժեք տեղեկանալու նրա վարքագծի վերաբերյալ՝ ազատագրկման ժամանակահատվածում: Այնուամենայնիվ, օրենսդրական այս խիստ շրջանակը, որպես դատապարտյալի «լավ վարքագիծ» դատավորի կողմից գնահատումը, չի ապացուցում օրենսդրական համակարգի վատը լինելու մասին, ինչը կհանդիսանար 2-րդ հոդվածից բխող Պետության կրած պրոցեսուալ պարտավորությունների թերացում:


Նմանատիպ գործերի քննության ժամանակ ներկայացված օրենսդրական համակարգի պատշաճության գնահատումը պայմանական վաղաժամկետ ազատում շնորհելու համար անհրաժեշտաբար բխում է խնդրո առարկա իրավիճակի *ex post facto* գնահատումից: Ուստի տվյալ դեպքում,

երկրորդ հոդվածով պայմանական վաղաժամկետ ազատման և հունական համակարգի համատեղելիությունը գնահատելիս Դատարանը չի կարող հաշվի չառնել Զ. Լ.-ին պայմանական վաղաժամկետ ազատում շնորհելուց հետո տեղի ունեցած դժբախտ դեպքը:

Սակայն, ուղիղ և ծանրակշիռ պատճառահետևանքային կապի բացակայությունը՝ հունական համակարգի կիրառման ձևերի և դիմողների որդու մահվան միջև կապահանջեր տվյալ դեպքի համար կիրառած օրենքի ակնհայտ սխալ, որպեսզի ներգրավեր պատասխանող երկրի պատասխանատվությունը 2-րդ հոդվածի դաշտում: Սա այդ դեպքը համարել չի կարելի քանի որ, ինչպես արդեն ասվել է կիրառված օրենքը թույլ էր տալիս դատավորին հաշվի առնել այլ էլեմենտներ Զ. Լ.-ի վարքագիծը գնահատելու համար, այն է՝ բանտի տնօրենի բերած հաշվետվությունը:

Ի վերջո, պայմանական վաղաժամկետ ազատման հունական համակարգը, ինչպես այն կիրառվել էր տվյալ դեպքի համար, չի խախտել ճշգրիտ հավասարակշռությունը, որը պետք է գոյություն ունենար Զ. Լ.-ի հասարակություն կրկին մուտք գործելու նպատակի և նրա կրկնահանցագործ դառնալու միջև: Դիտարկելով այս տեսակետից, նա նախատեսել է բավարար միջոցներ, որպեսզի ապահովի հասարակության պաշտպանությունը բռնի հանցագործությունների համար քրեորեն դատապարտված անձանց գործողություններից:

Եզրակացություն՝ խախտում չկա (չորս ծայն ընդդեմ երեքի):



ՀՈԴՎԱԾ 3

*Չոնյուլն ընդդեմ Հունաստանի
Վճիռ 12294/07, 17.1.2012 [1-ին բաժանմունք]*

Խոշտանգում

Անձի հանձնումը Կոնվենցիայի Անդամ Պետություն չհանդիսացող պետությանը՝ խոշտանգումներից հետո՝ գործի հանձնում Մեծ Պալատին

El-Masri v. “the former Yugoslav Republic of Macedonia”

*Էլ-Մասրին ընդդեմ «Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետության»
Թիվ 39630/09, (5-րդ բաժանմունք)*

Դիմումատուն Գերմանիայի քաղաքացի է: Նա պնդել է, որ իրեն «գաղտնի» հանձնել են այլ երկրին: Մասնավորապես, նա ձերբակալվել է, պահվել է մեկուսարանում, հարցաքննվել և ենթարկվել է վատ վերաբերմունքի «Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետությունում», այնուհետև, հանձնվել է CIA-ի հանձնման հարցերով զբաղվող աշխատակազմին, որն էլ հատուկ թռիչքով տեղափոխել է իրեն Աֆղանստան, որտեղ չորս ամիս շարունակ ենթարկվել է բազմաթիվ խոշտանգումների: Ենթադրյալը շարունակվել է 2003թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2004թ. մայիսի 29-ը, երբ դիմումատուն վերադարձել է Գերմանիա: Նա բողոքել է Կոնվենցիայի 3, 5, 8, 10, 13 հոդվածների ներքո:

Անօրինական միգրանտի բռնաբարությունն իր նկատմամբ հսկողություն իրականացնող ափամերձ պահակի կողմից. խախտում

Փաստեր

Դիմողը Թուրքիայի քաղաքացի է: 2001թ.-ի մայիսին նա այլ միգրանտների հետ միասին Ստամբուլում Իտալիա ուղևորվող նավ է բարձրանում: Նավը ճանապարհին կանգնեցվում է հույն ափամերձ պահակախմբի կողմից և ուղեկցվում դեպի Կրետեի մի նավահանգիստ: 2001թ.-ի հունիսի 05-ին դիմողը հայտնում է, որ ափամերձ երկու պահակներ լոգարանում իրեն ստիպել են հագուստները հանել: Նրանցից մեկը՝ Դ.-ն, իրեն սպառնացել է մահակով, այնուհետև բռնաբարել է դրա միջոցով: 2001թ.-ի հունիսի 6-ին ափամերձ պահակախմբի հրամանատարը, ով ներկա չի գտնվել փաստերի իրականացման ժամանակ, կարգադրում է հետաքննություն իրականացնել պատանդ վերցվածի պատմության հետքերով: 2004թ.-ի փետրվարին դիմողը թողնում է Հունաստանը և մեկնում Թուրքիա, այնուհետև Միացյալ Թագավորություն: 2006թ.-ի հունիսին ծովային նավատորմի վերաքննիչ ազգային դատարանը դատապարտում է Դ.-ին վեց ամիս պայմանական ազատազրկմամբ, որն էլ փոխարինվում է տուգանքով:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 3

ա) *Նյութական մասը.*

Պատանդ վերցված անձի բռնաբարությունը պետական աշխատողի կողմից պետք է համարվի որպես առանձնապես ծանր և վատ վերաբերմունքի ձև՝ հաշվի առնելով

այն հանգամանքը, որ օրինագանցը հեշտությամբ է կարողանում օգտվել իր զոհի խոցելիությունից: Բացի այդ, բռնությունը զոհի մոտ թողնում է խորը հոգեբանական վիրավորանքներ, որոնք ջնջվում են ավելի դանդաղ քան այլ հոգեկան և ֆիզիկական բռնությունները: Սույն գործով ազգային բոլոր դատարանները հաստատել են, որ տեղի է ունեցել բռնի ներթափանցում դիմողին պատճառելով խորը ֆիզիկական ցավ: Պատանդ վերցվածի նկատմամբ իրականացված նմանատիպ բնույթի գործողությունը առաջ է բերում բռնաբարված և անարգված լինելու զգացում՝ ինչպես էմոցիոնալ այնպես էլ ֆիզիկական առումով:

Այդինը Թուրքիայի դեմ որոշման մեջ, Դատարանը հաստատել է, որ ֆիզիկական և հոգեկան բռնի գործողությունների ամբողջությունը, որը իրականացվել է դիմումատուի նկատմամբ, ինչպես նաև նրա բռնաբարությունը, որը առանձնահատուկ դաժան բնույթի է եղել, կազմում են 3-րդ հոդվածով արգելված խոշտանգումներ: Ավելին, միջազգային այլ օրենսդրություններ ևս առարկայի միջոցով բռնաբարությունը ընդունում են որպես խոշտանգման գործողություն:

Կասկածի տակ չէ այն, որ սույն դեպքում դիմումատուին հասցված վերաբերմունքը իր դաժանությամբ և դիտավորությամբ հանդիսանում է Կոնվենցիայով նախատեսված խոշտանգման գործողություն:


Եզրակացություն. խախտում (միաձայն):

բ) Դատավարական մասը
Դատարանը կասկածներ ունի մերձափյա պահակների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու շրջանակներում խորը և արդյունավետ հետաքննություն իրականաց-

նելու փաստի առումով: Բռնի գործողության իրականացումից հետո, դիմումատուի խնդրանքը մոտակա տարածքում գտնվող բժշկի մոտ գնալու վերաբերյալ, մերժվել է: Ավելին, առափնյա պահակ Դ.-ի կողմից պաշտպանվող տեսակետում, դիմումատուի մուտքը մոտակա կրպակի բուժճառայություն նրանց գրքույկում չի գրանցվել:

Քննիչի եզրահանգման մեջ, որտեղ առափնյա պահակների պատմությունը կարծես թե արժանահավատ է թվում միայն այն բանի համար, որ դիմումատուի անունը կրպակի բուժճառայության գրքույկում գրանցված չի եղել, բավարար չէ: Ավելին, այս հետաքննության շրջանակներում դիմումատուի ներկայացրած վկայությունը կեղծվել է, քանի որ բռնաբարությունը, ինչի համար նա բողոք էր ներկայացրել փոխարինվել է «ապտակ» և «հոգեբանական տառապանքի գործադրում» բառերով, իրադարձությունները ներկայացվել են ոչ ճշգրիտ և դրանում ասվել է, որ դիմումատուն չի ցանկանում, որ առափնյա պահակները պատժվեն: Այս առումով 2007թ.-ի մարտի 13-ին մարդու իրավունքների պաշտպանը խնդրում է Ծովային նավատորմի նախարարին կարգադրել նոր կարգապահական վարույթ հարուցելու մասին, քանի որ առաջինը հաշվի առնել չի կարելի, որովհետև դիմումատուն իրոք առափնյա պահակի կողմից բռնաբարված է եղել:

Այնուամենայնիվ դատարանում այդ գործը քրեական տեսանկյունից քննվել է: Հունաստանը վեր է հանել քրեական իրավունքի դրույթներով 3-րդ հոդվածի խախտումը: Առափնյա պահակ Դ.-ն այդ դրույթների հիմքով դատապարտվել է ինչպես առաջին ատյանում, այնպես էլ վերաքննիչում: Ավելին, ներքին վարչական հետաքննությունը և քրեական



հետապնդումները բավականին օպերատիվ և ամբողջական էին և բխում էին Կոնվենցիայի նորմերից:

Վերաքննիչ դատարանը վճիռը կայացնելիս գործելով համապատասխան և պահպանողական ձևով, մեղմացուցիչ հանգամանքներ հաշվի առնելով՝ Դ.-ին դատապարտեց վեց ամիս պայմանական ազատազրկման, որն էլ փոխարինվեց 792 եվրո տուգանքով: Առափնյա պահակին տրված պատժի մեղմությունը ակնհայտորեն անհամարժեք է դիմումատուին հասցված վերաբերմունքի համեմատությամբ: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև այն փաստը, որ դիմումատուն խոշտանգման գործողության է ենթարկվել, հունական քրեական համակարգը, այնպիսին, ինչպիսին կիրառվել է սույն գործում, սպասված պաշտպանողական արդյունք չի ունեցել, ուստի հանձնաժողովը չէր կարող դիմումատուի նշած խախտումը և նրա նկատմամբ վատ վերաբերմունքը հաշվի չառնել և ադեկվատ կերպով հաշվի չառնել այն վատ վերաբերմունքը, որին ենթարկվել է դիմումատուն:

Ինչ վերաբերում է պետության պարտավորությանը. դիմումատուին փոխհատուցում հատկացնել, կամ առնվազն հնարավորություն տալ դիմել և ստանալ այն վնասը, որ վատ վերաբերմունքի արդյունքում նրան պատճառվել է, նրան ճանաչել առափնյա պահակների գործով ազգային նավատորմի դատավարության քաղաքացիական կողմ:

Այնուամենայնիվ, Հունաստանից նրա հեռանալու պատճառով և չնայած նրա ջանքերին պետությունից գործընթացի վերաբերյալ տեղեկություններ իմանալու համար՝ դրանում մասնակցություն ապահովելու նպատակով, հունական իշխանությունները թերացել են իրենց

պարտավորությունների մեջ նրան ժամանակին տեղեկություններ տրամադրելու գործում, ուստի վերջինս, որպես քաղաքացիական կողմ չի կարողացել օգտվել իր իրավունքներից՝ փոխհատուցում ստանալու համար: Այն դեպքում, երբ նույնիսկ հունական օրենսդրությունում քրեական դատավարության գործընթացը կախված չէ քաղաքացիական կողմի ներկայության ապահովումից և քրեական օրենսդրությունը չի հետաձգում գործի քննությունը, երբ քաղաքացիական կողմը ներկայություն չի կարողանում ապահովել: Եթե քաղաքացիական կողմը հայտարարում է, որ ցանկանում է հանդես գալ դատարանում, նա ձեռք է բերում դատավարության կողմի իրավունք և օգտվում իր բոլոր իրավունքներից, որ քրեական դատավարության օրենսգիրքը նրան օժտել է:

Ուստի, այն փաստը, որ դիմումատուն չի կարողացել ներկա գտնվել դատավարությանը սույն գործին առանձնահատուկ կարևորություն է տալիս, քանի որ, նույնիսկ ուսումնասիրման փուլում դիմումատուն, ով արդեն իսկ քաղաքացիական կողմ էր համարվում, չի կարողացել լիարժեքորեն օգտվել իր իրավունքներից: Այսպիսով, դիմումատուն, բավարար կերպով չի ներգրավվել դատավարության գործընթացում որպես քաղաքացիական կողմ:

Հետևաբար, պատասխանող երկիրը խախտելով 3-րդ հոդվածը բավարար կերպով չի անդրադարձել դիմումատուին հասցված վերաբերմունքին: Հետևաբար, չեն ընդունվել կառավարության առարկությունները՝ դիմումատուի կողմից բոլոր ներպետական դատական ատյանները չսպառելու վերաբերյալ, այն ենթադրյալ

պատճառով, թե իբր դիմումատուն հրաժարվել է քաղաքացիական կողմ լինել և հանդես գալ որպես զոհ:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Հոդված 41

50,000 եվրո՝ բարոյական վնասի փոխհատուցում:

ստիպված էր պարբերաբար բարձրանալ և իջնել աստիճաններով՝ հոմադիալիզ և այլ անհրաժեշտ դեղամիջոցներ ստանալու նպատակով: 2010թ մայիսին նա մեղավոր է ճանաչվել առաջադրված մեղադրանքի մեջ և դատապարտվել 11 տարի ազատազրկման: Երկու ամիս անց նրան տեղափոխել են այլ կալանավայր կրելու իր պատիժը, որտեղից, վերջնականապես, տեղափոխվել է շրջանային հոսպիտալ, որտեղ նա սկսում է ստանալ անհրաժեշտ բժշկական օգնություն:

Անմարդկային վերաբերմունք_____

ԻՐԱՎՈՒՆՔ

Սայլակին գամված բանտարկյալից պահանջվել է իջնել և բարձրանալ չորս աստիճանավանդակ՝ կյանքի համար անհարաժեշտ բժշկական օգնություն ստանալու նպատակով. Խախտում


Հոդված 3

Գրեթե տասնհինգ ամիսներ շարունակ դիմումատուն, ով հաշմանդամ էր և տեղաշարժվելու համար կախում ուներ սայլակից, ստիպված է եղել ինքնուրույն առնվազն չորս անգամ շաբաթվա ընթացքում իջնել և բարձրանալ չորս աստիճանավանդակներով նրա առողջության համար կենսական նշանակություն ունեցող անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու նպատակով: Անշուշտ, նա ստիպված էր անցնել այդ ճանապարհը երբ նրան անհրաժեշտ էր այցելել բժշկական բաժանմունք, տեսակցել իր փաստաբանի հետ, կլինիկական փորձարկումներ անցնել կամ մասնակցել դատական լսումներին: Նման ջանքերի գործադրումը անկասկած պատճառել են նրան ավելորդ ցավ, և նրա առողջությունը ենթարկել է անհիմն վտանգի: Հենց այդ պատճառով զարմանալի չէ, որ նա հրաժարվել էր իջնել աստիճաններով հանգստի բակում մարզվելու համար և ստիպված էր օրվա 24 ժամն անցկացնել կալանավայրի պատերի ներսում: Ի դեպ, իր վրդովմունքի և սթրեսի պատճառով դիմումատուն մի քանի անգամ նույնիսկ մերժել էր լքել իր բանտախուցը իր

Arutyunyan v. Russia
Արությունյանն ընդդեմ Հայաստանի
Գանգատ թիվ 48977/09
Վճիռ 10.1.2012 [1-ին բաժանմունք]

Փաստեր

Դիմումատուն գամվել էր սայլակին և ուներ մի շարք առողջական խնդիրներ, այդ թվում՝ երիկամային փոխպատվաստման անհրաժեշտություն, շատ թույլ տեսողություն, շաքարախտ և խիստ ճարպակալում: 2009թ. ապրիլին նրան ներկայացվել է մեղադրանք սպանություն կատարելու մեջ և կալանքի տակ պահվել ընդհանուր հսկողության ռեժիմի կալանավայրում: Նրա բանտախուցը գտնվում էր առանց վերելակի շենքի 4րդ հարկում, իսկ բժշկական և վարչական մասնաբաժինները գտնվում էին շենքի առաջին հարկում: Վերելակի բացակայության պատճառով՝ դիմումատուն



կյանքի համար անհրաժեշտ հեմոդիալիզը ստանալու համար: Չնայած նրան, որ ակնհայտորեն չեն եղել համապատասխան պայմաններ կալանավայրում դիմումատուին տեղում բուժելու համար՝ նաև փորձեր չեն ձեռնարկվել գտնել այդպիսի վայր Ռուսաստանի այլ մասերում: Ավելին, բժշկական զննության և ընթացակարգերից մեծամասնությունը դիմումատուն անցել էր սովորական սենյակումը, որը վերածվել էր հատուկ բժշկական ստորաբաժանման: Այս հանգամանքներում Դատարանը եզրակացրեց, որ ներպետական իշխանությունները դիմումատուին չեն վերաբերվել անվտանգ եւ պատշաճ կերպով հետևողական նրա հաշմանդամությանը, և որ նա զրկված է եղել բժշկական հաստատություններից արդյունավետ օգտվելու, բացօթյա մարզումներին մասկանցելու հնարավորությունից և թարմ օդից:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Հոդված 41

15,000 եվրո՝ ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Դատարանը, այնուհետև, գտավ, որ առկա էր Կոնվենցիայի 5 § 1 (գ) հոդվածի, այլ ոչ թե՛ 5 § 3 հոդվածի խախտում:

**Անմարդկային վերաբերմունք
Վատ վերաբերմունք**

**Զինվորական ծառայությունից
հրաժարվելու համար՝ ռազմական**

**Կալանավայրում պահվող Եհովայի վկայի
նկատմամբ վատ վերաբերմունք.
խախտում**

Feti Demirtas v. Tukey
Ֆետի Դեմիրտասն ընդդեմ Թուրքիայի
Վճիռ 5260/07 [2-րդ բաժանմունք]

Փաստեր

Դիմումատուն Եհովայի վկա է: 2005թ.-ին հետևելով աստվածաշնչյան ցուցումներին հրաժարվել է զինվորական ծառայություն կատարել, սակայն բռնի ներառվել է բանակային ուժերում: Նա ներգրավվել է զնդում, սակայն հետևողականորեն հրաժարվել է զինվորական համազգեստ կրել: Տվյալ վարքագծի պատճառով ինը քրեական հետապնդումներ են իրականացվել նրա հանդեպ: Կանգնել է երկու դատավորից և մեկ սպայից կազմված ռազմաօդային հրամանատարական դատարանի առաջ: Դիմումատուն այս դատարանում բազմաթիվ անգամներ մեկից վեց ամիս ժամկետներով ազատազրկումների է դատապարտվել: Բացի դրանից, այդ վարույթների շրջանակներում, դիմումատուն բազմաթիվ անգամներ ժամանակավորապես է տեղափոխվել ռազմական կալանավայրեր, որտեղ նա պահակների կողմից ենթարկվել է սպառնալիքների և վատ վերաբերմունքի: Ի վերջո նա զորացրվել է և ուղարկվել տուն:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 3
2008թ.-ի սեպտեմբերին, ռազմական դատարանը հաստատված է համարել այն փաստը, որ տվյալ ժամանակահատվածում, ավելի կոնկրետ՝ 2006թ.-ի ապրիլի 05-ից 12-

ը, դիմումատուի կալանավայրում գտնվելու ժամանակ, վերջինիս պարտադրվել է հանել հագուստները, կրել զինվորական համազգեստ, ժամեր շարունակ շղթայվել է աթոռից կամ մահճակալից, ծեծի և սպառնալիքների է ենթարկվել: Ըստ դատարանի՝ ելնելով քրեական օրենսգրքի դրույթներից նմանատիպ գործողությունները համարվում էին վատ վերաբերմունք: Դատարանը ոչ մի պատճառ չի տեսնում չընդունելու այդ եզրահանգումները: Այն վերաբերմունքը, որին զոհ է դարձել դիմումատուն զինվորական ծառայության ընթացքում հաստատապես վախի, տառապանքի, ստորադասության զգացում ստեղծող բնույթի է եղել, ինչը հատուկ է նվաստացուցիչ վերաբերմունքին, ստորացմանը, և հնարավոր է որ ուղղված է եղել դիմումատուի ֆիզիկական և մտավոր գույությունը խախտելուն:

Ի լրումն այս ամենի, դիմումատուի հանդեպ իրականացված բազմաթիվ քրեական հետապնդումները և քրեական դատապարտումների պարբերական բնույթը նրա հանդեպ որպես մտավորականի ճնշող արդյունք են ցուցաբերել: Հաշվի առնելով դիմումատուի հանդեպ իրականացված վերաբերմունքը՝ հանգամանքների այս ամբողջությամբ և դրանց ծանրությամբ, որոնք առաջացրել են խորը ցավ և տառապանք, ավելին են քան սովորական կալանավորման և քրեական դատապարտմանը բնորոշ նվաստացումը: Դիմումատուի անձի նկատմամբ իրականացված նման վերաբերմունքը այն բանի համար, որ մերժել է ծառայել բանակում, օժտված է անմարդկային և նվաստացնող բնույթով:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 9


Եհովայի վկա դիմումատուի անհամաձայնությունը զինվորական պարտադիր ծառայություն կատարելու հարցում պայմանավորված է կրոնական անկեղծ համոզմունքներով, որոնց միջև լուրջ և անհաղթահարելի հակասություն կա: Այս պատճառով, բազմաթիվ անգամներ դատապարտվելով, բայց երբևիցե այլընտրանքային ծառայության առաջարկ չստանալով դիմումատուի հանդեպ իրականացվել է հավատքի և կրոնական համոզմունքների դեմ ուղղված իրավունքի ոտնահարում: Կարելի է կարծել, որ Թուրքիայում գործող պարտադիր զինվորական ծառայությունը չունի բավարար հավասարակշռություն՝ հասարակության շահերի պահպանության և խղճի ազատության միջև:

Հետևաբար, այն պատիժները, որոնք կիրառվել են դիմումատուի հանդեպ՝ ոչիչ չձեռնարկելով նրա հավատը և կրոնական համոզմունքները հաշվի առնելու համար, ժողովրդավարական հասարակության մեջ չեն կարող համարվել բավարար: Ի վերջո, դիմումատուի զորացումը ոչ մի կերպ չի արդարացնում վերը նշվածը, քանի որ, նույնիսկ եթե նրան այլևս հետապնդում չի սպառնում (մինչդեռ դա կարող էր նրան սպառնալ ամբողջ կյանքում), միևնույն է նրա զորացումը տեղի է ունեցել զինվորական ծառայության ընթացքում նրա մոտ առաջացած հոգեկան խանգարման արդյունքում:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 6 § 1

Թուրքական քրեական իրավունքում անձը համարվում է զինվորական այն պահից սկսած, երբ նա ներգրավվում է զորագնդում:



Այնուամենայնիվ, դիմումատուն ներգրավվել է բռնի կերպով, և այդ ժամանակահատվածում երբեք չի ընդունել իր գինվորական կարգավիճակը: Մինչդեռ, հասկանալի է, որ վերջինիս վարույթը, որպես հավատքի հետևորդ, իրականացվելով բանակին պատկանող դատավորների կողմից, ովքեր բացառապես գինվորական խախտումներ են քննում, կասկած է առաջացնում, քանի որ նրա գործը միայն մասամբ է համապատասխանում այդ դատարանին: Այս փաստը հաշվի առնելով, դիմումատուն կարող էր արդարացված մտավախություն ունենալ, որ հրամանատարական դատարանը առաջնորդվել է ոչ ճիշտ, կողմնակալ համոզմունքներով: Ուստի, կարելի է համարել, որ դիմումատուի ունեցած կասկածները՝ օրենսդրության անկախության և անկողմնակալության վերաբերյալ օբյեկտիվորեն արդարացված են:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):
Հոդված 41

15,000 եվրո բարոյական փոխհատուցման համար:

(Տե՛ս նաև Ուկրե ընդդեմ Թուրքիայի (N° 39437/98, 24-ը հունվար 2006), Էրսեպը ընդդեմ Թուրքիայի (N° 43965/04, 22-ը նոյեմբերի 2011, տեղեկատվական նոթ N°146) և Բայաթյանն ընդդեմ Հայաստանի [GC] (N° 23459/03, 7-ը հուլիսի 2011, տեղեկատվական նոթ N° 143))

Անմարդկային պատիժ
Նվաստացուցիչ պատիժ
Էքստրադիցիա _____

Harkins and Edwards v. the United Kingdom
Հարկինսը և Էդուարդսն ընդդեմ Մեծ
Բրիտանիայի
9146/07 և 32650/07, Վճիռ 17.01.2012թ.

Փաստեր

Երկու դիմումատուները էքստրադիցիայի էին ենթարկվել Մեծ Բրիտանիայից ԱՄՆ, որտեղ, նրանք պնդում էին, որ կարող են ենթարկվել մահապատժի կամ ցմահ ազատազրկման՝ առանց ներման իրավունքի:

Առաջին դիմումատուն՝ Հարկինսը, մեղադրվել էր սպանության համար՝ զուգակցված կողոպուտի հետ:

Երկրորդ դիմումատուն՝ Էդուարդսը, մեղադրվել էր հրազենով դիտավորյալ երկու հոգու վրա կրակելու համար /արդյունքում մեկը սպանվել էր, իսկ մյուսը՝ վիրավորվել/: Դիմումատուի գոհերը, ըստ նրա, ծաղրել էին իրեն:

ԱՄՆ-ի իշխանություններն երաշխիքներ էին տվել, որ դիմումատուների նկատմամբ մահապատիժ չի կիրառվի, և մաքսիմալ պատիժը, որ նրանց կարող է սպանալ, դա ցմահ ազատազրկումն է:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 3

ա) Մահապատիժ:

Դատարանը կրկնեց իր դիրքորոշումն առ այն, որ էքստրադիցիայի վերաբերյալ գործերով կարևոր է ընդունող պետության բարեվարքության կանխավարկածը: Տվյալ դեպքում ընդունող պետությունը /ԱՄՆ/ ունի երկար պատմություն՝ դեմոկրատիայի, մարդու իրավունքների և օրենքի իշխանության ոլորտում և ունի երկարամյա

էքստրադիցիոն հարաբերություններ՝ Կոնվենցիայի կողմեր հանդիսացող Պայմանավորվող երկրների հետ:

Դատարանը հատուկ կարևորեց նաև ընդունող երկրի իշխանությունների վստահեցումները՝ մահապատժի չկիրառման վերաբերյալ: Երկու բողոքաբերների վերաբերյալ տրվել էին հստակ և աներկիմաստ երաշխիքներ՝ ԱՄՆ-ի կառավարության և դատախազական մարմինների կողմից: Սրանք բավարար էին, որպեսզի վերանար ցանկացած կասկած առ այն, որ բողոքաբերներից որևէ մեկը կենթարկվեր մահապատժի, եթե էքստրադիցիայի ենթարկվեր:

Եզրակացություն՝ անընդունելի /ակնհայտ անհիմն/

բ) Ցմահ ազատագրկում առանց վաղաժամկետ ազատման իրավունքի:

Դատարանը սկսեց ընդհանուր դատողություններից, որոնք հիմնվում էին նախադեպային իրավունքի վրա, և վերաբերում էին էքստրադիցիայի վերաբերյալ գործերով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ճիշտ կիրառմանը:

Դատարանը չընդունեց Վելինգտոնի հոչակավոր գործով Լորդերի պալատի կողմից տրված մեկնաբանությունները՝ «երեք տարբերակումների» վերաբերյալ:

/Առաջին տարբերակում՝ էքստրադիցիա և Պայմանավորվող երկրների տարած-քից այլ հիմքերով հեռացում, երկրորդ տարբերակում՝ տանջանքներ և այլ տիպի վատ վերաբերմունք, երրորդ տարբերակում՝ խստության նվազագույն անհրաժեշտ աստիճանի գնահատում ազգային պայմաններում և երկրից դուրս/:

Դատարանը նշեց, որ այն հարցը, թե արդյոք այլ երկրում կա Կոնվենցիայի հոդված 3-ին


հակասող վերաբերմունքի իրական ռիսկ, կախված չէ հեռացման իրա-վական հիմքից և ճիշտ չէր լինի տարբեր թեստեր անցկացնել՝ տարբերակում դնելով էքստրադիցիայի և երկրից այլ հիմքով հեռացման եղանակների միջև:

Երկրորդ տարբերակման վերաբերյալ Դատարանը նշեց, որ միշտ չէ, որ հնարավոր է որոշել, թե արդյո՞ք պոտենցիալ վատ վերաբերմունքը ընդունող երկրում կլինի բավականաչափ խիստ, որ որակվի որպես տանջանք:

Ինչ վերաբերում է Լորդերի պալատի կողմից մատնանշված երրորդ տարբերակ-մանը, Դատարանը նշեց, որ Սոերինգի գործով վճռի կայացումից հետո 22 տարվա ընթացքում Դատարանը երբևէ Կոնվենցիայի հոդված 3-ին վերաբերող գործով չի իրականացրել էքստրադիցիայի և Պայմանավորվող երկրից այլ հեռացման դեպքի համամասնության քննություն և պետք է եզրակացնել, որ հրաժարվել է այդ գործով կայացված վճռի 89-րդ և 110-րդ պարագրաֆներում ամրագրված «հավասարակշռող» մոտեցումից:

Դատարանը շատ զգուշավոր էր այնպիսի եզրակացության գալու հարցում, որ Պայմանավորվող երկրից հեռացումը Կոնվենցիայի հոդված 3-ի խախտում է: Մասնավորապես, բացի մահապատժին վերաբերող դեպքերից, այն շատ հազվադեպ է եզրակացրել, որ Կոնվենցիայի հոդված 3-ի խախտում կլինի, եթե բողոքաբերը էքստրադիցիայի ենթարկվի և ուղարկվի այնպիսի մի երկիր, որն բազմամյա ավանդույթներ՝ դեմոկրատիայի, մարդու իրավունքների և օրենքի իշխանության բնագավառում:

Ինչ վերաբերում է առանց վաղաժամկետ ազատման իրավունքի ցմահ ազատագրկման դեպքերին, Դատարանը նշեց, որ բացի այն դեպքերից, երբ պատիժը ակնհայ-



տորեն անհամաչափ է, Կոնվենցիայի Հոդված 3-ի խախտման հարց կարող է առկա լինել, եթե հիմնավորվի, որ՝ դիմումատուի շարունակական ազատազրկումը չի կարող արդարացված լինել որևէ օրինականության և պատժի նպատակների տեսանկյունից, նշանակված պատիժը դե ֆակտո և դե յուրե անփոփոխելի է:

Դատարանը նշեց, որ չնայած առանց վաղաժամկետ ազատման իրավունքի ցմահ ազատազրկում պատժատեսակը Կոնվենցիայի հետ անհամատեղելի չէ, սակայն այն ակնհայտորեն անհամաչափ ճանաչվելու ավելի մեծ հավանականություն ունի, քան այլ պատժատեսակները, հատկապես, եթե դատարանը հաշվի չի առել մեղմացուցիչ հանգամանքները, որոնք հիմնականում հիմնավորում են ամբաստանյալի նվազ հանցավորության աստիճանը /օրինակ՝ երիտասարդ տարիք կամ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ/:

Դատարանը եզրակացրեց, որ երկու դիմումատուների պատիժներն ակնհայտ անհամաչափ չէին: Չնայած առաջին դիմումատուի պատիժը վերջնական էր, սակայն Դատարանը նշեց, որ հանցանք կատարելու պահին դիմումատուի տասնութ տարին լրացած է եղել և վերջինս չի ունեցել հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ: Ավելին, սպանությունը կատարվել է զինված կողոպուտի ընթացքում, ինչը շատ լուրջ ծանրացնող հանգամանք է:

Ինչ վերաբերում է երկրորդ դիմումատուին, նա դատապարտվել էր հայեցողական ցմահ ազատազրկման՝ առանց վաղաժամկետ ազատման իրավունքի: Պատիժը պետք է ի կատար ածվեր այն բանից հետո, երբ դատավորը կքննարկեր բոլոր ծանրացնող և

մեղմացնող հանգամանքները: Բացի այդ, բողոքաբերը նախկինում դատապարտվել էր կանխամտածված սպանության փորձի համար, որի արդյունքում մեկ մարդ ստացել էր մարմնական վնասվածքներ:

Ավելին, քանի որ դիմումատուները դեռ չէին սկսել կրել իրենց պատիժը, նրանք չկարողացան հիմնավորել, որ իրենց տեղափոխումը ԱՄՆ և այնտեղ ազատազրկում կրելը հիմնավորված չի լինի պատժի նպատակների իրագործման տեսանկյունից:

Մինչդեռ միայն վերը նշված հանգամանքի հիմնավորման դեպքում կարող էր բարձրանալ Կոնվենցիայի հոդված 3-ի խախտման հարցը: Եվ նույնիսկ այդ դեպքում էլ ԱՄՆ իշխանությունները կարող էին օգտագործել իրենց լիազորությունները և մեղմացնել պատիժը՝ պայմանական վաղաժամկետ ազատ արձակելով բողոքաբերներին:

Այսպիսով, դիմումատուներից որևէ մեկը չապացուցեց, որ ԱՄՆ էքստրադիցիա արվելու դեպքում իրենց նկատմամբ կարող է դրսևորվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածը խախտող վերաբերմունք:

Եզրակացություն՝

էքստրադիցիան Կոնվենցիայի խախտում չէ /միաձայն/

Դատարանը մերժեց նաև Կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածների խախտման վերաբերյալ երկրորդ դիմումատուի բողոքը՝ նույն հիմնավորումներով, որոնք բերված են Վինտերի գործով կայացված վճռում:

**Անմարդկային պատիժ
Նվաստացուցիչ պատիժ _____**

Vinter and Others v. the United Kingdom

Վինտերը և այլոք ընդդեմ Միացյալ

Նահանգների

թիվ 66069/09, թիվ 130/10 և թիվ 3896/10

Վճիռ 17.01.2012թ. [4-րդ բաժանմունք]

Փաստեր

Անգլիայում և Ուելսում սպանությունը պատժվում է պարտադիր ցմահ ազատազրկմամբ: Մինչև 2003թ. Քրեական արդարադատության մասին օրենքի ուժի մեջ մտնելը Պետական Քարտուղարությունը լիազորված էր սահմանել այն նվազագույն ժամանակահատվածը, որի ընթացքում պարտադիր ցմահ ազատազրկվածները պետք է կրեին իրենց պատիժը՝ վաղաժամկետ ազատվելու իրավունք ստանալու համար: Վերը նշված օրենքի ընդունումից հետո այդ լիազորությունը վերապահված է գործը քննող դատավորին: Այն դատապարտյալները, ում պատժի կրման նվազագույն ժամանակահատվածը սահմանվել է Պետական Քարտուղարության կողմից, իրավունք ունեն դիմել Բարձր դատարան՝ վերանայման խնդրանքով: Երեք դիմումատուներեն էլ մեղադրվում էին սպանություն կատարելու մեջ և երեքի համար էլ սահմանվել էր «ցմահ ժամկետ»: Սա նշանակում է, որ նրանց հանցագործությունները այնքան ծանր էին որակվել, որ նրանք պետք է ցմահ կրեին պատիժը բանտում, եթե Պետական Քարտուղարությունը չօգտագործեր իր հայեցողական լիազորությունը և բացառիկ հանգամանքների առկայության /պրակտիկայում՝ մահացու հիվանդության կամ լրիվ անգործունակության / դեպքում

չտար ազատ արձակման հրաման: Առաջին դիմումատուի՝ պարոն Վինտերի «ցմահ ժամկետը» սահմանել էր գործը քննող դատավորը՝ 2003թ. օրենքի հիման վրա և օրինական ուժի մեջ էր թողնվել Վերաքննիչ դատարանի կողմից այն հիմքով, որ պրն. Վինտերն արդեն նախկինում սպանության համար դատվածություն ուներ: Երկրորդ և երրորդ դիմումատուների ժամկետը սահմանվել էր Պետական Քարտուղարության կողմից՝ ձևավորված պրակտիկայի ներքո, սակայն 2003թ. ակտն ուժի մեջ մտնելուց հետո այն հաստատվել էր Բարձր դատարանի կողմից, իսկ դատարանի որոշումն էլ օրինական ուժի մեջ էր թողնվել Վերաքննիչ դատարանի կողմից: Երկրորդ դիմումատուն՝ պրն. Բամբերի դեպքում նշվել էր, որ սպանությունները եղել են կանխամտածված, իսկ զոհերը՝ բազմաթիվ. այս հանգամանքները՝ զուգակցված սեռական բնույթի գործողություններով, առկա էին նաև երրորդ դիմումատուի՝ պրն. Մուրի գործով: Եվրոպական դատարանին ներկայացրած իրենց գանգատներում դիմումատուները բողոքել էին, որ նրանց նկատմամբ կիրառված «ցմահ ժամկետի» հրահանգները նշանակում էին, որ նրանց դատավճիռները, ըստ էության, ենթակա չէին մեղմացման, ինչը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է, ինչպես նաև, որ «ցմահ ժամկետի» հրահանգների կիրառումը, առանց ներպետական դատարանների կողմից կանոնավոր վերանայման իրավունքի, խախտում է Կոնվենցիայի 5 § 4 հոդվածը: Երկրորդ և երրորդ դիմումատուները նաև պնդում էին, որ առկա էր Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում՝ այն հիմնավորմամբ, որ «ցմահ ժամկետի» հրահանգները նրանց նկատմամբ ընդունել է ոչ թե գործը քննող դատավորը, այլ հետագայում՝ Բարձր



դատարանը, որը կիրառել է պատժի նշանակման ավելի խիստ սկզբունքները, քան նրանց կողմից հանցագործությունների կատարման պահին գործող սկզբունքները:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 3

Մինչդեռ համապատասխան պատիժների նշանակման հարցերը հիմնականում դուրս էին Կոնվենցիայի կարգավորման ոլորտից, սակայն խիստ անհամաչափ պատժի նշանակումը կարող էր որակվել որպես Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով վատ վերաբերմունք: Սակայն պատժի «խիստ անհամաչափությունը» որոշվում էր թեսթերի միջոցով և հանդիպում էր միայն հազվագյուտ և բացառիկ դեպքերում: Հաշվի առնելով դիմումատուների կողմից կատարված սպանությունների ծանրության աստիճանը, նրանց նկատմամբ կիրառված «ցմահ ժամկետի» հրահանգները չէին կարող դիտարկվել որպես խիստ անհամաչափ:

Հաջորդ քննարկման ենթակա հարցն այն էր, թե ցմահ ազատազրկման կամ շատ երկար ժամկետով ազատազրկման դեպքում որ պահին կարող է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման հարց առաջանալ: Ցմահ ազատազրկման դեպքում անհրաժեշտ է տարբերակել պատժի հետևյալ երեք տեսակները՝ (I) ցմահ ազատազրկում՝ նվազագույն ժամկետով պատիժը կրելուց հետո վաղաժամկետ ազատման իրավունքով, (II) ցմահ ազատազրկման հայեցողական պատիժ՝ առանց ներման իրավունքի, (III) պարտադիր ցմահ ազատազրկում՝ առանց ներման իրավունքի:

Պատժի առաջին տեսակը հստակորեն ենթակա է մեղմացման, ուստի Կոնվենցիայի

3-րդ հոդվածի խախտման հետ կապված հարց չի առաջանում: Ինչ վերաբերում է երկրորդ և երրորդ տեսակներին (ցմահ ազատազրկման հայեցողական և պարտադիր պատիժներ՝ առանց ներման իրավունքի), ապա պատժի խիստ անհամաչափ չլինելու դեպքում պատժի նշանակման պահին Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ կապված խախտման հարց չի կարող առաջանալ: Նմանհարց կարող է առաջանալ, եթե (I) դիմումատուի շարունակական ազատազրկումը այլևս չի կարող հիմնավորվել որևէ իրավական պատժի տեսանկյունից և (II) եթե պատիժը *de facto* և *de iure* մեղմացման ենթակա չէր:

Դիմումատուների նկատմամբ կիրառված «ցմահ ժամկետի» հրահանգները իրենց բնույթով երկրորդի տեսակի պատիժն էին, այն է՝ ցմահ ազատազրկման հայեցողական պատիժ՝ առանց ներման իրավունքի: Ինչ վերաբերում է վերը նշված թեսթի առաջին ենթահարցին՝ Դատարանը նշեց, որ դիմումատուներից ոչ մեկ չապացուցեց, որ նրանց շարունակական ազատազրկումը դադարել էր արդարացված լինել պատժի տեսանկյունից: Առաջին դիմումատուն՝ պրն. Վինտերը դատապարտվել էր առանձնակի դաժանությամբ կատարված սպանության համար, մինչդեռ նա արդեն դատապարտված էր եղել մեկ այլ սպանության համար, սակայն պատիժը երեք տարի կրելուց հետո վաղաժամկետ ազատվել էր: Այսինքն, նրա շարունակական ազատազրկումը օրինական էր և հիմնավորված՝ պատժի տեսանկյունից: Մինչդեռ երկրորդ և երրորդ դիմումատուները՝ պրն. Բամբերը և պրն. Մուրը, իրենց պատիժները կրել էին համապատասխանաբար՝ 26 և 16 տարի: Նրանց պատիժները վերանայվել էր 2009թ.-ին Բարձր դատարան ներկայացված

բողոքների հիման վրա և թողնվել էր անփոփոխ: Հաշվի առնելով Բարձր դատարանի որոշումներում ներկայացրած համապատասխան, բավարար և համոզիչ հիմքերը՝ Դատարանը համաձայնեց, որ նրանց շարունակական ազատազրկումը օրինական էր և հիմնավորված՝ պատժի տեսանկյունից:

Քանի որ դիմումատուները չապացուցեցին, որ նրանց շարունակական ազատազրկումը պատժի նպատակների իրագործման տեսանկյունից արդարացված չէ, ուստի Դատարանը չքննարկեց թեսթի երկրորդ հարցը, այն է՝ արդյո՞ք պատիժը *de facto* և *de iure* մեղմացման ենթակա չէր:

Եզրակացություն՝ երեք դիմումատուների դեպքում էլ խախտումն առկա չէ (չորս ծայն ընդդեմ երեքի):

Հոդված 5§4

Դիմումատուների բողոքները նույնական էին *Kafkaris* գործով կայացված որոշմամբ անընդունելի ճանաչված բողոքին: Չնայած որ շարունակական ազատազրկումը կարող էր խախտել Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, եթե այն այլևս պատժի նպատակների իրագործման տեսանկյունից արդարացված չէ դա չի նշանակում, որ պատիժը պետք է պարբերաբար վերանայվեր՝ հոդված 5-ի խախտում թույլ չտալու համար: Ազգային դատարանների դիրքորոշումներից պարզ էր, որ պատիժները նշանակվել էին պատժի նպատակների արդյունավետ իրագործման նպատակով և մեկուսացման անհրաժեշտությունից ելնելով:

Դիմումատուների նկատմամբ նշանակված պատիժներն այսպիսով տարբերվում էին Դատարանի կողմից քննված Սթաֆֆորդի գործով նշանակված ցմահ ազատազրկումից: Ինչպես Կաֆկարիսի


վերաբերյալ գործով, այնպես էլ այս դեպքում Դատարանը գտավ, որ դիմումատուների նկատմամբ նշանակված պատիժներն օրինական են, չունեն հետագա վերանայման կաիրք և համապատասխանում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ պարագրաֆին:

Եզրակացություն՝ անընդունելի /ակնհայտ անհիմն/

Հոդված 7

Երկրորդ և երրորդ դիմումատուները նաև նշում էին, որ Քարտուղարության որոշումը վերանայելիս Բարձր դատարանը հիմնվել է պատժի նշանակման ավելի խիստ սկզբունքների վրա, քան այն սկզբունքները, որ գործել են իրենց կողմից հանցանքների կատարման պահին: Դատարանը մերժեց այդ փաստարկը:

Ընդունելով, որ մինիմալ ժամկետի նշանակումը ցմահ ազատազրկման համատեքստում պաշտպանվում է Կոնվենցիայի հոդված 7-ով՝ Դատարանը նախ և առաջ նշեց, որ այն օրենսդրությունը, որի հիման վրա Բարձր դատարանը կայացրել է իր որոշումը, ակնհայտորեն պաշտպանում է ի սկզբանե նշանակված մինիմալ ժամկետից ավելի երկար մինիմալ ժամկետ նշանակելուց: Դատարանը նշեց նաև, որ վերանայումը կատարելիս Բարձր դատարանը ստիպված է եղել հաշի առնել և պատժի նշանակման նոր ռեժիմը /որը մանրամասն և հասկանալի կանոններ է սահմանում ցմահ ազատազրկման դեպքում արդարացված մինիմալ ժամկետի սահմանման համար/, և գործը քննող դատավորի և Լորդ Գլխավոր դատավորի ռեկոմենդացիաները:



Եզրակացություն՝ անընդունելի /ակնհայտ անհիմն/

Նվաստացուցիչ վերաբերմունք _____

Հոգեկան խնդիրներ ունեցող անձանց հատուկ սոցիալական տան պայմանները. խախտում

Stanev v. Bulgaria
Ստանևն ընդդեմ Բուլղարիայի
36760/06, Վճիռ 17.1.2012 [ՄՊ]

(տե՛ս՝ ստորև հոդված 6§1)

Բանտարկյալին համապատասխան օրթոպեդիկ կոշիկներ չտրամադրելը՝ խախտում

Vladimir Vasilyev v. Russia
Վլադիմիր Վասիլյեվն ընդդեմ Ռուսաստանի
Գանգաղ թիվ 28370/05
Վճիռ 10.01.2012թ. [1-ին բաժանմունք]

Փաստեր

Յմահ ազատագրկում կրելիս դիմումատուի աջ ոտնաթաթի ծայրը և ձախ ոտքի մի մասը ամպուտացվել էր ցրտահարության պատճառով, սակայն նա չէր կարող ձեռք բերել համապատասխան օրթոպեդիկ կոշիկներ: Դիմումատուին պատիժը կրելու վայրի բժշկական հաստատությունը 1996թ.-ին հաստատել էր, որ դիմումատուն իրոք նման կոշիկի կարիք ուներ, սակայն նշել էր, որ դատապարտյալ կալանավորվածներին մատակարարման վերաբերյալ համապատասխան կանոնակարգով չի պահանջվում, որ դրանք պետք է

տրամադրվեն պետության կողմից: Մեկ այլ կալանավայրում, որտեղ դիմումատուն պահվել էր 2001թ.-ին, նշվել էր, որ չեն կարող դիմումատուին ապահովել օրթոպեդիկ կոշիկներով, քանի որ դրանք կարող էին արտադրվել միայն այլ քաղաքում, և որ կար երկար ցանկ այլ անձանց, ովքեր սպասում էին իրենց հերթին՝ այդպիսի կոշիկներ ստանալու համար: Այն կալանավայրերում, որտեղ դիմումատուն պահվել էր հետագայում կարծում էին, որ, հաշմանդամության կարգ չունենալու պայմաններում դիմումատուն չէր կարող ունենալ օրթոպեդիկ կոշիկների կարիք: Դիմումատուն պնդում էր, որ այդպիսի կոշիկների բացակայությունն իրեն ցավ և դժվարություններ է պատճառում իր հավասարակշռությունը պահելիս՝ ընթացիկ ռեժիմը կատարելու և իր բանտախուցը մաքրելու ժամանակ: Նշված և բազմազան այլ հիվանդություններով տառապելու հիմքով (այդ թվում՝ շաքարախտ) դիմումատուն քաղաքացիական հայց ներկայացրեց, սակայն երբեք ժամանակին չէր տեղափոխվում իր գործով լսումներինն արդյունքում նրա հայցը մերժվեց:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 3
Չնայած Դատարանը անհիմն է համարել և մերժել դիմումատուի բողոքները՝ առողջական այլ խնդիրների ուղղությամբ ոչ բավարար բժշկական օգնություն ստանալու մասով, սակայն օրթոպեդիկ կոշիկներին վերաբերող նրա բողոքը լուրջ մտահոգություն առաջացրեց: Առնվազն մեկ բժշկական հաստատություն, որտեղ դիմումատուն պահվել էր 1996թ.-ին, հաստատեց, որ նա նման կոշիկների կարիք ուներ, իսկ կալանավայրը, որտեղ

դիմումատուն պահվել էր 2001թ.-ին, տվել էր լիովին այլ հիմնավորում՝ դատապարտյալին այդպիսի կոշիկով չապահովելու համար: Այնուամենայնիվ, գործում 2001թ.-ից հետո դիմումատուի առողջական վիճակի բարելավման կամ վերանայման մասին գրառումների բացակայության պարագայում ազգային իշխանությունները պարտավոր էին արձագանքել դիմումատուի իրադրությանը, որի մասին նրանք քաջատեղյակ էին: Դիմումատուի ունեցած խնդիրների լուծմանն ուղղված քայլերի բացակայությունը 2005-2011թթ. ընթացքում, հանգեցրեց նրան, որ նա կրեց այնպիսի դժվարություններ և տառապանքներ, որոնք որակվեցին որպես նվաստացուցիչ վերաբերմունք:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 6§1

Ըստ էության դիմումատուն բողոքում է, որ նրան հնարավորություն չի տրվել ներկայանալ դատարան, երբ լսվում էր իր քաղաքացիական հայցը:


Չնայած Ռուսաստանի օրենսդրությունը դատավարության յուրաքանչյուր կողմի իրավունք է տալիս մասնակցելու գործի բանավոր լուծմանին, սակայն այն չի պարունակում հստակ դրույթներ կալանավորվածներին քաղաքացիական գործերով դատական նիստերին ներկայացնելու մասին: 6-րդ հոդվածը չի երաշխավորում քաղաքացիական գործերով դատարանի կողմից լսվելու իրավունքը, այլ վերաբերում է ընդհանուր մրցակցային դատավարությանը և կողմերի հավասարությանը՝ վերապահելով պետությանը այս սկզբունքների ապահովման մեթոդների ընտրությունը: Հաշվի առնելով, որ դիմումատուի

ներկայությունը դատարանում գործնականում ապահովելը կարող էր բարդություններ առաջացնել՝ ազգային իշխանությունները կարող էին դատավարությունն անցկացնել կալանավայրում կամ դատավարությունն անցկացնելին վիդեոկապի միջոցով, սակայն այս տարբերակներից որևէ մեկի կիրառման հարցը չէր քննարկվել: Դիմումատուն չէր կարողացել նաև պատշաճ իրավաբանական օգնություն ստանալ իր քաղաքացիական գործով, և միակ հնարավոր տարբերակը նրա ազգականներից, ընկերներից կամ ծանոթներից որևէ մեկին լիազորելն էր՝ իրեն դատարանում ներկայացնելու համար: Սակայն, ներպետական դատարանները, մերժելով դիմումատուի խնդրանքը անձամբ ներկայանալ դատարան, չեն քննարկել դիմումատուի դատական քննությանը արդյունավետ մասնակցելու ապահովման հարցը նրան ներկայացնելու ցանկություն ունեցող նրա ընկերոջ կամ ազգականի միջոցով կամ դիմումատուի կողմից որևէ անձին լիազորելու իր անունից դատարանում հանդես գալու միջոցով: Հաշվի առնելով, որ դիմումատուի վկայությունը էական նշանակություն կունենային նշված քաղաքացիական գործի քննության համար՝ Դատարանը եզրակացրեց, որ ազգային ընթացակարգերը չեն բավարարում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41

9,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում, իսկ նյութական վնասի հատուցման պահանջը մերժվեց:



ՀՈՂՎԱԾ 6

Հոդված 6 § 1 (քաղաքացիական)

Դատարանի մատչելիություն _____

Դատարանի ուղղակի մատչելիության բացակայություն գործունակության վերականգնում պահանջող անձի համար. խախտում

Stanev v. Bulgaria
Սրանն ընդդեմ Բուլղարիայի
36760/06, Վճիռ 17.1.2012 [ՄՊ]

Փաստեր

2000թ.-ին, շիզոֆրենիա հիվանդությամբ տառապող դիմումատուին դատարանը ճանաչել է սահմանափակ գործունակ՝ նրա երկու ազգականների դիմումի հիման վրա: 2002թ.-ին դիմումատուն իր կամքին հակառակ անցնում է խնամակալության տակ և տեղափոխվում հեռավոր լեռնային մի գյուղում գտնվող հոգեկան խանգարումներով տառապող ունեցող անձանց սոցիալական կենտրոն: 2003 և 2004թթ. անմարդկային և ստորացուցիչ վերաբերմունքը, մարդկանց խոշտանգումները կանխարգելող եվրոպական Կոմիտեն իր պաշտոնական այցի շրջանակներում հաստատում է, որ սոցիալական կենտրոնի պայմանները կարելի է որակել որպես անմարդկային և ստորացուցիչ: 2004-2005թթ. դիմումատուն իր փաստաբանի միջոցով դիմում է դատախազին և քաղաքապետին խնամակալությունը դադարացնելու վերաբերյալ գործընթացը սկսելու համար, սակայն՝ անարդյունք: Խնամակալը

նույնպես հրաժարվել էր նախաձեռնել նման գործընթաց՝ պատճառաբանելով, որ սոցիալական կենտրոնն ամենահարմար կացարանն է նրա համար, քանի որ վերջինս չունի հնարավորություն ինքնուրույն կյանք վարելու: Սրան գալիս է լրացնելու այն հանգամանքը, որ դիմումատուի շիզոֆրենիա ախտորոշումը հստակ չէր: Կար հավանականություն, որ վերջինիս ալկոհոլի չարաշահման և շիզոֆրենիայի ախտանիշները շփոթած լինեին, և հնարավոր էր, որ վերջինս ունակ էր ներգրավվելու հասարակությանը, և որ նման կացարանում գտնվելը կարող էր վատթարացնել նրա առողջական վիճակը:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 5 § 1

ա) Ընդունելիություն


Դիմումատուին սոցիալական կենտրոն տեղափոխելը վերագրվում է պետականիշխանություններին, քանի որ դիմումատուին այնտեղ տեղավորելու դիմումից սկսած, ներառյալ՝ մինչ այդ ձեռնարկած ամբողջ գործընթացն իշխանությունների գործողությունների արդյունքն է, որոնք իրականացվել են պետական գործակալների կողմից: Դիմումատուն բնակեցված էր սոցիալական կենտրոնի մի սենյակում, որտեղից նա կարող էր դուրս գալ, սակայն դրսում գտնվելու ժամանակահատվածում նրա այցելած վայրերը վերահսկվում էին և սահմանափակվում: Դրսում գտնվելու նկատմամբ իրականացվող վերահսկողությունը և այն հանգամանքը, որ վարչակազմն իր մոտ էր պահում դիմումատուի անձնական փաստաթղթերը, համարվում էին շահագրգիռ կողմի անձնական ազատության լուրջ

սահմանափակումներ: Նույնիսկ եթե դիմումատուն կարողանում էր որոշ տեղաշարժեր կատարել, միննույն է՝ գտնվում էր մշտական վերահսկողության տակ, և նա չէր կարող առանց թույլտվության դուրս գալ կենտրոնից ցանկացած պահին: Կառավարությունը չի հիմնավորում, որ դիմումատուի առողջական վիճակը վտանգ ներկայացնող բնույթի էր կամ որ անհրաժեշտ էր կիրառել հատուկ սահմանափակումներ՝ նրան պաշտպանելու նպատակով: Դիմումատուին սոցիալական կենտրոնում պահելու ժամանակահատվածը ամրագրված չէր, և հետևաբար՝ անորոշ էր, և նա գրանցված էր քաղաքային իշխանությունների ցուցակում՝ որպես մշտական հասցե նշելով սոցիալական կենտրոնը: Ավելի քան ութ տարի նա գտնվել է այդ կենտրոնում, և պետք է որ լիովին զգար նրա հանդեպ կիրառված սահմանափակումների բացասական ազդեցությունը: Նրան երբևիցե չեն հրավիրել հայտնել իր կարծիքը կենտրոնում տեղավորվելու վերաբերյալ, և նա երբեք ուղղակիորեն չի տվել իր համաձայնությունը դրա վերաբերյալ: Ներպետական օրենսդրությունը որոշակի առավելություններ էր տալիս շահագրգիռ կողմին և թվում է, որ նա լավ էր պատկերացնում իրավիճակը: Ավելի ուշ՝ 2004թ.-ից սկսած, դիմումատուն հոգեբույժների մոտ ավելի պարզ արտահայտեց կենտրոնը լքելու իր ցանկության մասին, և դա իրականացնելու համար դիմեց իշխանություններին՝ իր գործունակությունը վերականգնելու խնդրանքով: Դատարանը համոզիչ չհամարեց, որ դիմումատուի հետ համաձայնեցված չէր կենտրոնում տեղավորելու հարցը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուլղարական

իշխանությունները դիմումատուին սոցիալական կենտրոն տեղավորելու, նրա նկատմամբ սահմանափակումներ կիրառելու, կենտրոնում գտնվելու տևողության մասին որոշումները ընդունել են առանց նրա համաձայնության՝ իրավիճակը բնորոշվում է որպես ազատության սահմանափակում, և անհրաժեշտություն է առաջանում կիրառել 5§1 հոդվածը:

բ) Հիմնավորում

Համաձայն Բուլղարիայի օրենսդրության՝ հոգեկան խանգարումներով տառապող անձանց համար նախատեսված սոցիալական կենտրոնում տեղավորելը, առանց նրանց նախնական համաձայնության՝ անօրինական է: Այս որոշումը ինքնին բավարար է, որ Դատարանը համարի, որ տեղի ունեցել էր դիմումատուի ազատության սահմանափակում, և խախտվել է 5-րդ հոդվածը: Ամեն դեպքում, կատարվածը հակասում է Կոնվենցիայի 5§1 հոդվածին, քանի որ սույն դրույթից որևէ բացառություն կիրառելի չէ այս դեպքում, այդ թվում՝ 5§1 հոդվածի (ե) կետը՝ «հոգեկան հիվանդներին» օրինական կալանքի վերցնելը: Սույն գործում, գործունակությունը սահմանափակելու շրջանակներում իրականացրած բժշկական փորձաքննությունը վկայում է այն մասին, որ դիմումատուն իրականում ունեցել է խանգարումներ: Սակայն, իշխանությունների կողմից նշված հոգեբուժական փորձաքննությունը երկու տարվա վաղեմության է, ինչպես նաև՝ խնամակալը առանց առողջական վիճակի հավանական բարելավումը ճշտելու է դիմումատուին սոցիալական կենտրոն տեղավորել, չի հանդիպել նրա հետ և չի հարցրել նրա



կարծիքը: Դիմումատուի առողջական վիճակի վերաբերյալ 2000թ.-ի բժշկական եզրակացությունը 2002թ.-ին դիմումատուի սոցիալական կենտրոն տեղափոխելու ժամանակ համարվել է վերջնական կարծիք: Հարկ է նշել, որ ներպետական իշխանությունները պարտավորություն չէին կրում սոցիալական կենտրոն տեղափոխելու պահին կարգադրելու նոր հոգեբուժական փորձաքննություն անցկացնել: Բժշկական ավելի նոր գնահատումը կարող էր բավարար լինել դիմումատուին՝ սոցիալական կենտրոն տեղափոխելը խախտում համարելու համար:

Ավելին, չի հաստատվել, որ դիմումատուն վտանգ է ներկայացրել իր և շրջապատի համար: Դատարանը նաև թերի է համարում նրա մոտ խանգարումների առկայության ստուգումը, որը կարդարացներ նրա մեկուսացումը: Նույնիսկ եթե դիմումատուն բուժվել է հոգեբույժի մոտ, այդ բուժումը չի ներառել նրա վիճակի պարբերական գնահատում և սոցիալական կենտրոնում նրան պահելու անհրաժեշտություն. այս հանգամանքը վերաբերում է հենց 5 § 1 (ե) հոդվածին: Իսկապես, նման գնահատում նախատեսված չէր համապատասխան օրենսդրությամբ: Դիմումատուին սոցիալական կենտրոն տեղափոխելը չի կարգադրվել «օրենքով սահմանված կարգով» և չի իրականացվել 5§1 հոդվածի ե) ա), Ֆ) կետերին համապատասխան:

Եզրահանգում խախտում (միաձայն):

Հոդված 5 § 4

Կառավարությունը չի նշել որևէ իրավական պաշտպանության ներպետական միջոց, որի միջոցով դիմումատուն կարող էր ուղղակիորեն վիճարկել իրեն սոցիալական կենտրոն տեղափոխելու օրինականության և դրա կիրառման հարցը: Բուլղարական

դատարանները որևէ ձևով չեն միջամտել դիմումատուին սոցիալական կենտրոն տեղափոխելու հարցում, իսկ ներպետական օրենսդրությամբ չի նախատեսում հոգեկան խանգարումներով տառապող անձանց սոցիալական կենտրոններ տեղափոխելիս պարբերական իրավաբանական հսկողություն իրականացնելը: Ավելին, քանի որ դիմումատուին սոցիալական կենտրոն տեղափոխելու հարցը Բուլղարիայի օրենսդրությամբ չի համարվում ազատությունից զրկում, ապա չի ընձեռնում այդ միջոցի որպես ազատությունից զրկվելու օրինականության վիճարկման իրավունք: Դիմումատուին սոցիալական կենտրոն տեղափոխելու պայմանագրի անվավեր ճանաչումը՝ վերջինիս համաձայնության բացակայության հիմքով կարող է նախաձեռնվել միայն խնամակալի կողմից: *Եզրահանգում* խախտում (միաձայն):

Հոդված 5§5

Պարզաբանված չէ, որ դիմումատուն մինչ Դատարանի սույն վճիռը կարող էր ունենալ փոխհատուցում ստանալու իրավունք, կամ որ նա ձեռք կբերի սույն վճիռից հետո նման իրավունք անօրինական սահմանափակման դեմ:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 3

3-րդ հոդված արգելում է իշխանությունների պատասխանատվության ներքո գտնվող անձանց նկատմամբ անմարդկային և ստորացնող վերաբերմունքը, անկախ նրանից թե դա քրեական գործի շրջանակներում ենթարկված կալանք է, թե շահագրգիռ կողմի կյանքի և առողջության պաշտպանությանն ուղղված մեկուսացում:

Սոց. կենտրոնում սնունդը բավարար չի եղել և վատ որակ է ունեցել: Շենքը բավարար չափով չի ջեռուցվել, իսկ ձմռանը դիմումատուն ստիպված է եղել վերարկուն հագած քնել: Նա կարողացել է շաբաթական միայն մեկ անգամ լոգանք ընդունել՝ այն էլ անապահով և խարխուլ լոգարանում: Զուգարանը սարսափելի վիճակում է եղել և վտանգովոր է եղել դրանից օգտվելը: Վերջապես, այդ կացարանի բնակիչների հագուստները լվացումից հետո տրվել են խառը, ոչ յուրաքանչյուրինը իրեն, ինչը իր հերթին նրանց մոտ ստորացված լինելու զգացողություն է առաջացրել: Դիմումատուն տևական ժամանակ, մոտ յոթ տարի (2002-ից մինչ 2009թթ. մինչ վերանորոգումը, երբ դիմումատուն արդեն այդտեղ ապրում էր) ենթարկվել է վերը նշված խնդրո առարկա բոլոր պայմաններին:

Անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը, մարդկանց խոշտանգումները կանխարգելող եվրոպական Կոմիտեն տեղանքն այցելելուց հետո հաստատել է, որ համապատասխան ժամանակահատվածում կենտրոնում կյանքի պայմանները կվորակվեին որպես անմարդկային և ստորացնող: Տեղյակ լինելով 2002-ից 2009թթ. ժամանակահատվածի այս եզրակացությանը, բուլղարական կառավարությունը ընթացք չի տվել հաստատությունը փակելու գործընթացին: Ֆինանսական միջոցների սղությունը որ, Կառավարությունը ի հայտ է բերում, համապատասխան փաստարկ չէ, որպեսզի արդարացնի դիմումատուին վերը նշված պայմաններում պահելը:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն)

Հոդված 13 զուգակցված 3րդ հոդվածով.

Դիմումատուին սոց. կենտրոն տեղափոխելը ներքին օրենսդրությամբ չի համարվում կալանք: Ուստի, հիմնվելով Պետության պատասխանատվության մասին 1988թ-ի օրենքի վրա, շահագրգիռ կողմը չի կարող փոխհատուցում ունենալ՝ կենտրոնում առկա կյանքի վատ պայմանների համար: Ի դեպ, գոյություն չունի որևէ դատական որոշում, որում սոցիալական կենտրոնների վատ պայմանների մեղադրանքներում կիրառվել է այս օրենքը: Մնում է ենթադրել, որ նույնիսկ եթե շահագրգիռ կողմը կարողացել է վերականգնել իր գործունակությունը և լքել սոցիալական կենտրոնը, ոչ մի փոխհատուցում չի ստացել ստորացուցիչ պայմաններում պահվելու համար:

Հոդված 6§1

Դիմումատուն առանց խնամակալի կամ քր. դատավարության օրենսգրքի 277 հոդվածով նախատեսված անձանց միջնորդության չէր կարող դիմել իր գործունակության վերականգնման համար: Ներքին օրենսդրությունը ոչ մի տարբերակում չի դնում անգործունակների և սահմանափակ գործունակների միջև: Օրենսդրությունը չի նախատեսում նաև որևէ հնարավորություն պարբերական վերահսկողություն իրականացնելու՝ խնամակալության շարունակության կամ դա դադարացնելու վերաբերյալ: Բացի այս, դիմումատուի դեպքում, չի գործել նաև ժամկետային սահմանափակում: Եթե դատարան դիմելու իրավունքը բացարձակ իրավունք չէ, և եթե անձի դատավարական իրավունքների սահմանափակումները, նույնիսկ եթե նա սահմանափակ գործունակ է, կարող են արդարացվել, ապա, դա վկայում է այն մասին, որ դրան առնչվող անձի համար չափազանց կարևոր է անգործունակությունը



վերանայելու դատարան դիմելու իրավունքը: Գալիս ենք նրան, որ այս մարդիկ սկզբունքորեն պետք է այս ոլորտում օգտվեն անմիջականորեն դատարան դիմելու իրավունքից:

Պետությունը, այնուամենայնիվ, շարունակում է ձեռնպահ մնալ՝ ամիջականորեն դատարան դիմելու ընթացակարգային ձևակերպումները սահմանելու հարցում: Միևնույն ժամանակ, դա չի հակասում 6-րդ հոդվածին, եթե ազգային օրենսդրությունը այս ոլորտում որոշակի սահմանափակումներ նախատեսի, դրա նպատակը դատարանների գերբեռնվածությունից և վատ ձևակերպված դիմումներից խուսափելը կլինի:

Սակայն ակնհայտ է, որ այս խնդիրը լուծելու համար հնարավոր է կիրառել ավելի պակաս սահմանափակումներով միջոցներ քան անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն է, օրինակ դիմումներ ներկայացնելու պարբերականությունը կամ գործերի ընդունելիության վերաբերյալ համակարգի ստեղծումը: Բացի այս, ներկայումս, եվրոպական մակարդակով գոյություն ունի, անհատ անձանց դատարանում անձամբ իրենց գործունակությունը վերականգնելու թույլտվության միտում: Դեռ ավելին, մտավոր հետամնաց անձանց պաշտպանության միջազգային օրենքները աճող կարևորություն են տալիս այսպիսի անձանց օպտիմալ իրավաբանական ինքնուրույնության օժտմանը: 6 § 1 հոդվածը սկզբունքայնորեն պետք է մեկնաբանվի որպես սահմանափակ կարողություններով յուրաքանչյուր անձի երաշխավոր՝ ինչպիսին օրինակ դիմումատուն է, դատարանում ինքնուրույն հանդես գալու համար: Բուլղարիայի համապատասխան օրենսդրությամբ դատարան դիմելու հստակ

գործընթացը բավարար աստիճանի երաշխավորված չէ:

Եզրակացություն՝ խախտում (խախտում)

Հոդված 46

Իշխանությունները, որպեսզի վերացնեին դիմումատուի խախտված իրավունքների հետևանքները, պետք է ճշտեին, թե արդյոք վերջինս ցանկացել է մնալ խնդրո առարկա սոց. կենտրոնում թե ոչ: Սույն վճիռը ոչնչով չի կարող դիտվել որպես խոչնդոտ դիմումատուին մտավոր հետամնացների համապատասխան կենտրոնում տեղավորելու հարցում, եթե հաստատված համարվի, որ վերջինս ենթակա է նման կենտրոն տեղափոխվելուն: Փոխարենը, այն դեպքում, երբ դիմումատուն կունենա առարկություն, կդիմի իշխանություններին անհապաղ վերանայելու իր իրավիճակը՝ սույն վճիռի եզրակացությունների լույսի ներքո: Հաշվի առնելով սահմանափակ գործունակությամբ անձին՝ իրավունքների վերականգնման համար անձամբ դատարանում հանդես գալու հաստատված արգելքով խախտված 6 § 1 հոդվածը, Դատարանը պաշտպանող երկրին պարտավորեցնում է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, որպեսզի այն դառնա հնարավորինս մատչելի:

Հոդված 41

15,000 եվրո՝ բարոյական վնասի փոխհատուցման համար:

Առանց փաստաբանի ներկայացած հոր բացակայության ժամանակ, ծնողական իրավունքներից զրկման որոշումը վիճարկելու քայլերի համար տեղեկատվության տրամադրման մերժում. խախտում

Assuncao Chaves v. Portugal
Ասունասաո Չավեսն ընդդեմ Պորտուգալիայի
Վճիռ 61226/08, 31.1.2012 [2րդ բաժանմունք]

Փաստեր

Դիմումատուն Բրազիլիայի քաղաքացի է և բնակվում է Պորտուգալիայում: Նա հանդիսանում է 2006թ.-ին հիվանդանոցում ծնված մի աղջնակի հայր, որի մայրը պորտուգալիայի քաղաքացի է: Երեխայի անվտանգության համար անհանգստացած հիվանդանոցի բուժանձնակազմը տեղեկացնում է հանրային իշխանությանը այն մասին, որ երեխայի մայրը տառապում է թմրադեղերի հակումով, մտավոր թուլությամբ(օլիգոֆրենիա), էպիլեպսիայով և այն մասին, որ նա հրաժարվում է բուժում ընդունել: Բուժանձնակազմը տեղյակ է պահել նաև երեխայի ծնողների նյութական վիճակի և մորական ընտանիքի հետ նրանց կոնֆլիկտային հարաբերությունների մասին: Վտանգավոր իրավիճակում գտնվող երեխաների և դեռահասների պաշտպանության Հանձնաժողովը կարգադրում է երեխային պահել հիվանդանոցում այնուհետև նրան տեղավորել մանկատանը: 2009թ. ապրիլին ընտանեկան գործերով դատարանը հայտարարում է դիմումատուին և երեխայի մորը ծնողական իրավունքներից զրկելու մասին և արգելում երեխայի հետ


տեսակցումը: 2009թ. սեպտեմբերին, դատավորը ժամանակավոր խնամակալ է նշանակում և որդեգրման վարույթ սկսում:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 6§1

ընտանեկան գործերով դատարանում, վճռի հրապարակման պահին, դիմումատուն ներկա չի գտնվել: Այնուամենայնիվ որոշումը նրան անձամբ ծառայել է այն պահին, երբ նա 2009թ. ապրիլի 7-ին բողոքով ներկայացել է դատարան: Հենց նույն օրվանից էլ սկսել է հոսել վերաքննիչ դիմելու տասնօրյա ժամկետը: Դիմումատուն անշուշտ վերաքննիչ բողոքով չի դիմել դատարան վճռի վերաքննության համար, սակայն դրա վերաբերյալ իր բողոքը 2 անգամ արտահայտել է այլ եղանակով. առաջինը 2009թ.-ի ապրիլի 09-ին էլեկտրոնային հաղորդագրությամբ դիմել է Հանրապետության գլխավոր դատախազին և 2009թ.-ի ապրիլի 10-ին նույնը Գերագույն դատարան:

Պետք է ընդունել, որ դիմումատուն ո՛չ ձևերով, ո՛չ ուղղով չի հետևել դատարանում վերաքննիչ բողոք բերելու կարգին: Իսկապես, դիմումատուն հեռացել է ճիշտ ճանապարհից վճռի դեմ իր առարկությունը բերելու համար՝ դիմելով իշխանության երկու այնպիսի մարմինների, որոնք իրավասություն չունեին ենթադրյալ խախտումները վերացնելու համար: Ավելին, դիմումատուն, վերաքննիչ փուլում պետք է ներկայանար փաստաբանով: Իրավաբանական օգնությունը կարող էր օգնել վարջնաժամկետը բաց չթողնելու համար: Այնուամենայնիվ, դիմումատուն, համապատասխան վերաքննիչ դիմում է ներկայացրել միայն 2009թ.-ի օգոստոսին, երբ վճիռը արդեն ուժի մեջ էր մտել:



Այնուամենայնիվ, ավելի բարեխիղճ կլիներ, հարց տալ, թե արդյոք դիմումատուն տեղյակ է եղել այն քայլերի մասին, որոնք պետք է ձեռնարկվեին ընտանեկան գործերով դատարանի վճիռը բողոքարկելու համար, այն պարագայում, երբ վճռի հրապարակման պահին ինքը ներկա չի գտնվել, վարույթի ընթացքում փաստաբան չի ունեցել և բողոքարկման համար ունեցել է միայն տասնօրյա ժամկետ:

Վտանգավոր իրավիճակում գտնվող երեխայի պաշտպանությունը բարդ խնդիր է ոչ միայն այն պատճառով, որ կան բազմաթիվ վիճելի հարցեր, այլ նրա համար, որ դրանք կարող են առաջացնել շատ նուրբ և լուրջ հետևանքներ, ինչպես երեխայի այնպես էլ ծնողների մոտ: Ընտանեկան հարցերով դատարանը ձեռնարկել է բոլոր միջոցները ինչն իրենից պահանջվում էր, որպեսզի դիմումատուն և երեխայի մայրը մասնակցեն դատավարությանը: Սակայն, անհրաժեշտ էր, որ դատարանը լրացուցիչ նախազգուշություն և հավելյալ ուշադրություն հատկացներ այն հանգամանքին, որ դիմումատուն չէր իմացել դատավճռի հրապարակման օրվա մասին, առավել ևս չէր ներկայացել փաստաբանի հետ:

Սակայն, խնդրո առարկա վճիռը ոչ մատնացույց է անում դրա հետագա ընթացքը, ոչ էլ դրա ուժի մեջ մտնելու ժամկետը. պորտուգալական օրենքը տվյալ պարագայում չի պարտադրում, որ այսպիսի վարույթում նման տեղեկատվություն դրվի վճռի տեքստում: Այսպիսով, հաշվի առնելով գործի առանձնահատուկ հանգամանքները տեղին չէ մեղադրել դիմումատուին այն հարցում, որ վերջինս ո՛չ ձևերով, ո՛չ ուղղվ չի պահպանել դատարանում վերաքննիչ բողոք բերելու կարգը: Հետևաբար, սույն գործում, վերաքննիչ

դիմում ներկայացնելու ուղիների, ձևերի և ժամկետների վերաբերյալ հստակ, հուսալի և պաշտոնական տրված տեղեկատվության պակասը խախտել են Կոնվենցիայի 6 § 1 հոդվածով նախատեսված դատարան դիմելու դիմումատուի իրավունքը:

Հոդված 8. եթե, բժշկական դրդապատճառներով նախատեսված է եղել երեխայի խնամքը հաստատությանը հանձնելը և նրան այնտեղ պահելը, ապա 2009թ. ապրիլի 2-ի վճռի համար այն հիմք է, որպեսզի դադարեցվի երեխայի և ծնողների միջև կապը՝ 2007թ. նոյեմբերի 7-ից մոր հետ, իսկ 2007թ. դեկտեմբերի 5-ից դիմումատուի հետ: Վերջիններս իրավունք ունեին այցելել իրենց աղջկան:

Ընտանեկան կապի ընդհատումը ամբողջովին մնում է դիմումատուի և նրա կնոջ պատասխանատվության տակ, ովքեր որոշել էին իրենց բնակությունը հաստատել Իսպանիայում: Դիմումատուն ոչ մի անառարկելի պատճառ չի բերել, որպեսզի հիմնավորի աղջկա հետ նրանց տարածքային հեռացումը, ում նկատմամբ այդ ժամանակահատվածում առանձնահատուկ լուրջ հսկողություն էր իրականացվում:

Ըստ այդմ, ընտանեկան գործերով դատարանը, հիմնվելով համապատասխան և բավարար փաստերի վրա, հաշվի առնելով երեխայի գերակա շահերը, ընդունել է որոշում:

Եզրակացություն՝ խախտում չկա (չորս ծայն ընդդեմ երեքի)

Հոդված 41

10,000 եվրո՝ բարոյական վնասի փոխհատուցում:

Հոդված 6 § 1 (քրեական)

Արդար դատաքննություն

Վտարում _____

Իրական վտանգ, որ երրորդ կողմի նկատմամբ խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցը ընդունվել է դիմումատուի գործի վերանայման ժամանակ. վտարումը կարող է հանգեցնել խախտման

Othman (Abu Qatada) v. the United Kingdom
Օթման (Աբու Քաթադա) ընդդեմ Միացյալ Թագավորության
8139/09, Վճիռ 17.1.2012 [4-րդ բաժանմունք]

Փաստեր


Դիմումատուն, ազգությամբ հորդանացի, Միացյալ Թագավորություն է ժամանել 1993թ. և ապաստան է ստացել: 2002-ից 2005թթ. կալանավորվել է 2001թ հակատեռորիստական, հանցագործության և անվտանգության ակտի հիման վրա: Նրա ազատումից հետո պետքարտուղարը ծանուցել է նրան իրեն վտարելու մտադրության մասին: Միևնույն ժամանակ Հորդանանում դիմումատուն *in absentia* մեղադրվել է ոմբակոծություն և պայթյուն կատարելու դավադրության համար: Դիմումատուի դեմ երկու դատավարություններում էլ վճռորոշ ապացույցը, որը հանգեցրել է նրա դատապարտմանը նույն գործով երկու մեղադրյալների մեղադրական ցուցմունքներն էին, ովքեր հետագայում բողոքում էին խոշտանգման դեմ: 2005թ.

Միացյալ Թագավորությունը և Հորդանանի կառավարությունը ստորագրեցին Փոխըմբռնման հուշագիր (ՓՀ), որը նախատեսում էր մի երկրից մյուսին անձին հանձնելու ժամանակ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան մի շարք երաշխիքներ: Այն նախատեսում է նաև, որ երկու կառավարությունների կողմից միասնաբար նշանակված անկախ մարմնի ներկայացուցիչը արագ և կանոնավոր այցելի յուրաքնչյուր վերադարձրած անձին: Ավելի ուշ, մարդու իրավունքների ուսումնասիրության Ադալտի կենտրոնը ՄԹ կառավարության հետ այդ նպատակով կնքեց մոնիտորինգի պայմանագիր: Դիմումատուի գործով լրացուցիչ հարցադրում է արվել հնարավոր գործի վերանայման մասին և պատասխանվել է Հորդանանի կառավարության կողմից: Դիմումատուն բողոքարկեց իրեն վտարելու որոշման դեմ, բայց նրա պահանջը ներպետական դատարանների կողմից մանրամասն ուսումնասիրվելուց հետո վերջնականապես մերժվեց:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 3

ՄԱԿ-ի և տարբեր ՀԿ-ների զեկույցները ցույց են տալիս, որ Հորդանանում խոշտանգումը մնում է «տարածված և սովորական» և կողմերը ընդունում են, որ առանց Հորդանանի կառավարության երաշխիքների, դիմումատուի՝ բացահայտ իսլամիստի նկատմամբ վատ վերաբերմունքի իրական վտանգ կարող է լինել: Այդ կապակցությամբ Դատարանը նշեց, որ միայն հազվագյուտ դեպքերում երկրում առկա իրավիճակը կհանգեցնի



նրան, որ պետության տրամադրած երաշխիքները որևէ նշանակություն չեն ունենա: Ավելի հաճախ, Դատարանը առաջին հերթին կգնահատի տրամադրած երաշխիքների որակը (արդյո՞ք դրանք ներկայացվել են Դատարան, արդյո՞ք դրանք յուրահատուկ երաշխիքներ են, արդյո՞ք ընդունող պետության համար դրանք պարտադիր են և՛ կենտրոնական և՛ տարածքային մակարդակներում, և արդյո՞ք հանձնող Պայմանավորված պետության ներպետական դատարանների կողմից ստուգվել են դրանց հուսալիությունը) և երկրորդը՝ արդյո՞ք ընդունող պետության պրակտիկայի լույսի ներքո այդ երաշխիքները վստահելի են (արդյո՞ք ընդունող պետությունը Պայմանավորված պետություն է, արդյո՞ք այդ պետությունը տրամադրում է արդյունավետ պաշտպանություն խոշտանգումների դեմ և արգելում է վարքագիծը, որոնց համար երաշխիքներ են սահմանված, արդյո՞ք ընդունող պետությունը հանձնող պետության հետ ունի ամուր փոխադարձ կապեր և արդյո՞ք նախկինում նմանատիպ երաշխիքները պահպանվել են, արդյո՞ք դիմումատուն նախկինում այնտեղ վատ վերաբերմունքի արժանացել է և արդյո՞ք ընդունող պետությունը ունի բավարար միջոցառումներ արդյունավետ մոնիթորինգ անցկացնելու համար և դիմումատուի կողմից իր իրավաբանի հետ անարգել տեսակցելու համար):

Դիմումատուի գործով ՄԹ-ը և Հորդանանի կառավարությունը անկեղծ ջանքեր են գործադրել հստակ և մանրամասն երաշխիքներ ձեռք բերելու և տրամադրելու ուղղությամբ երաշխավորելու համար, որ դիմումատուն Հորդանան վերադառնալուց հետո վատ վերաբերմունքի չի ենթարկվի: Կնքված ՓՀ-ը, որը այդ ջանքերի արդյունքն

էր, իր մանրամասնությամբ և պաշտոնականությամբ լավագույնն էր Դատարանի կողմից նախկինում ուսումնասիրված բոլոր երաշխիքներից: Ավելին, երաշխիքները տրամադրվել են բարեխղճորեն և Հորդանանի կառավարության բարձրագույն մարմինների կողմից հավանության են արժանացել, ում փոխադարձ կապերը ՄԹ-ն հետ պատմականորեն շատ ամուր են եղել: ՓՀ-ը հստակ նախատեսում է, որ դիմումատուն կվտարվի Հորդանան, որտեղ նա կկալանավորվի և նրա դատական գործը այն հանցագործությունների համար, որոնց համար մեղադրվել է *in absentia* կվերանայվի: Դիմումատուի կարևորությունը հավանաբար կստիպի Հորդանանի իշխանությանը ավելի զգուշանալ, որ նրա նկատմամբ ճիշտ վերաբերմունքը երաշխավորվի, քանի որ վատ վերաբերմունքը ոչ միայն լուրջ հետևանքներ կունենա ՄԹ-ն հետ փոխադարձ հարաբերությունների վրա, այլ նաև կարող է առաջացնել միջազգային դժգոհություն: Ի վերջո, համաձայն ՓՀ-ի, Ադալեի կենտրոնը պետք է կանոնավոր այցելի դիմումատուին, որը հնարավորություն կունեա ստուգել երաշխիքները պահպանվում են, թո՛ղ: Հետևաբար, դիմումատուի վերադարձը Հորդանան նրան չի ենթարկի վատ վերաբերմունքի արժանանալու իրական վտանգի:

Եզրակացություն. վտարումը չի հանգեցնի խախտման (միաձայն)

Հոդված 5

Դատարանը հաստատեց, որ 5-րդ հոդվածը կիրառելի է վտարման գործերի նկատմամբ, և Պայմանավորված պետությունը կխախտի այդ հոդվածը, եթե անձին հանձնի մի

պետության, որտեղ անձի՝ այդ հոդվածով պաշտպանվող իրավունքների կոպիտ խախտման իրական վտանգ կարող է առաջանալ: Այնուամենայնիվ, այս գործերի նկատմամբ Դատարանը շատ բարձր շեմ է կիրառել: Հորդանանի օրենքներին համաձայն, դիմումատուի նկատմամբ դատավարությունը պետք է սկսի նրա կալանավորումից հետո հիսուն օրվա ընթացքում, որը Դատարանի տեսանկյունից կալանքի կարճաժամկետ տևողության պահանջից ելնելով 5-րդ հոդվածի կոպիտ խախտում է համարվում:

Եզրակացություն. վտարումը չի հանգեցնի խախտման (միաձայն)

Հոդված 6

Դիմումատուն բողոքեց, որ եթե ինքը վերադառնա Հորդանան, *inter alia* խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցի ընդունելիության պատճառով նրա գործի վերանայումը կդիտվի արդարադատության սարսափելի մերժում: Դատարանը նկատեց, որ արդարադատության սարսափելի մերժումը դուրս է դատավարության ընթացքում բացարձակ անկանոնություններից կամ երաշխիքների անբավարարությունից, ինչպիսին, եթե տեղի ունենար Պայմանավորված պետության տարածքում կարող էր հանգեցնել 6-րդ հոդվածի խախտման: Այն ինչ պահանջվում էր արդար դատաքնության սկզբունքների խախտում էր, որն այնքան հիմնարար էր, որ համարվում էր այդ հոդվածով երաշխավորված իրավունքների բուն էության զրոյացում կամ ոչնչացում: Այդ կապակցությամբ, Դատարանը նշեց, որ խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցի ընդունումն ակնհայտ հակասում է ոչ միայն

Կոնվենցիայի 6-րդ հոդվածին, այլ նաև արդար դատաքնության միջազգային իրավունքի հիմնարար չափանիշներին: Այն կհանգեցնի անբարոյական, անօրինական և ամբողջությամբ անվստահելի դատավարության ելքի: Քրեական գործի քննության ժամանակ խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցի ընդունումը, հետևաբար կհամարվի արդարադատության սարսափելի մերժում: Դիմումատուի գործով մեղադրական ցուցմունքները ստացվել են երկու վկաներից, ովքեր ձեռի են ենթարկվել ոտքերի ներբանների հատվածում, այն սովորաբար հայտնի է որպես *falaka*, որի նպատակը կարող էր լինել միայն տեղեկատվություն ստանալը: Դատարանը նախկինում ուսումնասիրել է վատ վերաբերմունքի նման դրսևորումներ և չի տատանվում այն որակել որպես խոշտանգում: Ավելին, Հորդանանում խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործումը տարածված է, և Հորդանանի օրենսդրությամբ նախատեսված իրավական երաշխիքները թվում է՝ պրակտիկորեն չնչին արժեք ունեն: Մինչդեռ դիմումատուն հնարավորություն կունենա վիճարկելու իր դեմ խոշտանգմամբ ձեռք բերված ցուցմունքների ընդունելիությունը, նա կբախվի հիմնական դժվարությունների հետ՝ իրադարձություններից շատ տարիներ անց դա անելով և այն դատարանի առաջ, որը սովորաբար մերժում է նման բողոքները: Տրամադրելով ստույգ և անվիճարկելի ապացույց, որ նույն գործով մեղադրվողները իր դեմ ցուցմունք տալու համար ենթարկվել են խոշտանգման, և որ այդ ապացույցը հավանաբար կօգտագործվի իր գործի վերանայման ժամանակ, Հորդանան վտարվելու պարագայում դիմումատուի վրա արդարադատության սարսափելի մերժման



իրական վտանգը ապացուցելու ծանր պարտականություն կդրվի:

Եզրակացություն. վտարումը կհանգեցնի խախտման (միաձայն)

Հոդված 6§2

Անմեղության կանխավարկած _____

Vulakh and Others v. Russia
Վուլախ և այլոք ընդդեմ Ռուսաստանի
թիվ 33468/03, Վճիռ 10.1.2012 [1-ին
բաժանմունք]

Փաստեր

Չորս դիմումատուները Վ.Վ-ի ժառանգներն էին, ով իշխանությունների կողմից կասկածվում էր բռնությամբ կատարված մի շարք հանցագործությունների կատարման համար հետապնդվող հանցավոր միավորման ղեկավար լինելու մեջ: Ենթադրյալ հանցավոր միավորման երեք երիտասարդ անդամների ձերբակալման լուրը ստանալուն հաջորդեց Վ.Վ-ի ինքնասպանությունը, որի արդյունքում քրեական հետապնդումը դադարեցվեց: Հանցավոր միավորման մյուս երեք ենթադրյալ անդամները հետագայում դատապարտվեցին մի շարք հանցագործությունների համար, և առաջին ատյանի դատարանը հստակ նշեց իր վճռում, որ Վ.Վ-ն միանշանակ հանդիսացել է հանցավոր միավորման ղեկավար: Հետագա քաղաքացիական հայցի շրջանակներում քաղաքացիական դատարանները կարգադրեցին Վ.Վ-ի կաթի գործարանի բաժնեմասերի մի մասը

փոխանցել հանցագործությունից տուժած անձանց: Չնայած, որ Վ.Վ-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել էր, այդ որոշումը կայացնելիս քաղաքացիական դատարանները հիմնվեցին հանցախմբում Վ.Վ-ի դերի հետ կապված քրեական դատարանների կողմից պարզած հանգամանքների վրա: Եվրոպական դատարանին ուղղված իրենց գանգատում դիմումատուները բողոքարկում էին Վ.Վ-ի նկատմամբ անմեղության կանխավարկածի խախտումը (Կոնվենցիայի 6§2 հոդված) և նրանց սեփականության իրավունքի խախտումը (Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը):

ԻՐԱՎՈՒՆՔ

6§2 հոդված

6§2 հոդվածի շրջանակները չեն սահմանափակվում ընթացիկ քրեական դատավարություններով, այլ նաև տարածվում են այն դատական որոշումների վրա, որոնք ընդունվել են քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո: Ավելին, դա քրեական իրավունքի հիմնարար կանոններից է, որ քրեական պատասխանատվությունը չի կարող գերազանցել քրեական արարք կատարած անձի կեցությանը: Այնուամենայնիվ, քրեական նույն գործի շրջանակներում համապատասխանողների նկատմամբ իրականացվող քրեական դատաքննության ընթացքում քրեական դատարանը, առանց որևէ սահմանփակման և վերապահման, հաստատված համարեց այն փաստը, որ Վ.Վ.-ն հանդիսացել է հանցավոր միավորման ղեկավար և համակարգել ու ֆինանսավորել է միավորման հանցավոր գործունեությունը: Հետագա քաղաքացիական դատավարությունների

ընթացքում կիրառվող ձևակերպումն ավելին քան հստակ փաստում էր, որ հանցախումբը Վ.Վ-ի գլխավորությամբ էր կատարել ծանր հանցագործությունները, ներառյալ՝ սպանություններ և սպանության փորձեր: Անհրաժեշտ էր հստակեցնել հիմնարար տարբերությունն հանցագործության կատարման մեջ պարզապես կասկածվելու մեջէ, և դատարանի կողմից արված այն հստակ հայտարարության միջև, որ անձն ըստ էության կատարել է հանցագործություն, սակայն առկա չէ վերջնական մեղադրանք: Ներպետական դատարանների վճիռներում բովանդակվող Վ.Վ-ին՝ մինչև մեղքի հաստատումը մեղավոր ճանաչող հայտարարությունների բացահայտ և անվերապահ բնույթը դիտարկվում են որպես նրա անմեղության կանխավարկածի իրավունքի խախտում:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի ներքո՝ անձը մեկ այլ անձին վնաս հասցնելու համար կարող է ազատվել քաղաքացիական պատասխանատվությունից, եթե նա կկարողանա ապացուցել մեղքի բացակայությունը: Փոխհատուցման հայցը ուսումնասիրելիս քաղաքացիական դատարանները Վ.Վ.-ի և դիմումատուների մեղքի կապակցությամբ որևէ ինքնուրույն եզրահանգումներ չեն կայացրել, այլ պարզապես հղում են կատարել Վ.Վ-ի համապատասխանողների վերաբերյալ քրեական դատարանների կայացրած դատավճիռներին: Քանի որ ո՛չ դիմումատուները, ոչ էլ Վ.Վ.-ն դատաքննության կողմ չեն հանդիսացել, և քանի որ Դատարանը արդեն իսկ գտել է, որ

Վ.Վ-ի մեղքը քրեական դատավճիռներում՝ մեղադրանքի բացակայության պայմաններում դիտվում է որպես նրա անմեղության կանխավարկածի խախտում, ապա ներպետական դատավարությունները դիմումատուների սեփականության իրավունքների պաշտպանության համար չեն տրամադրել անհրաժեշտ դատավարական երաշխիքներ:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41

Յուրաքանչյուրին՝ 4,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Այնուհետև, Դատարանը գտավ, որ նյութական վնասի փոխհատուցման համար ամենապատշաճ միջոցը կլինի քաղաքացիական դատաքննության վերաբացումը և գործի վերանայումը վճռում հաստատված սկզբունքների լույսի ներքո:


ՀՈԴՎԱԾ 8

Պողիտիվ պարտականություններ _____

Անձնական կյանքը հարգելու իրավունք
Բնակարանի անձեռնմխելիության
իրավունք _____

Իշխանությունների տևական թերացումը՝
աղբահանության, դրա հավաքման և
վերամշակման կառավարումը
իրականացնելու համար. խախտում

Di Sarno and Others v. Italy
Դի Սարնոն և այլոք ընդդեմ Իտալիայի



Վճիռ 30765/08, 10.1.2012 [2րդ քաժանմունք]

Փաստեր

Իտալիայի Նեապոլ քաղաքի մի համայնքում, որտեղ դիմումատուները ապրում կամ աշխատում են «աղբային ճգնաժամ»-ի է ենթարկվել: 1994թ. փետրվարի 11-ից մինչ 2009թ. դեկտեմբերի 31-ը շրջանում հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ դիմումատուները 2007թ. վերջից մինչ առնվազն 2008թ. մայիս հրաժարվել են ապրել աղտոտված միջավայրում, որտեղ ամենուրեք փողոցներում լքված աղբակույտեր էին:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 8

Այս դրույթը կիրառելի է քանի որ, այն իրավիճակը, որում հայտնվել էին դիմումատուներն իրենց համայնքում կարող էր վատթարացնել իրենց կյանքի որակը, մասնավորապես, վնաս հասցնել նրանց անձնական կյանքի և բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքին:

Ավելին, Դատարանը կարող էր միայն գալ այն եզրահանգմանը, որ դիմումատուների կյանքին և առողջությանը վտանգ էր սպառնում, չնայած այն բանի, որ նրանք չէին հայտարարել, որ աղբակույտերի հետ կապված հիվանդություններով ախտահարվել են, այնուամենայնիվ Եվրադատարանը հաստատեց, որ հսկա քանակությամբ աղբի կուտակումը հասարակական վայրերում և օդի աղտոտվածությունը բնակչության համար սանիտարական վտանգ էին ներկայացնում: Սույն գործը, հանրային իշխանությունների ենթադրյալ խախտմանն է վերաբերում,

որոնք թերացել են համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ համայնքում աղբահանությունը, դրա հավաքումը և վերամշակումը իրականացնելիս: Ուստի Դատարանը գտնում է, որ այս գործում խախտվել են 8-րդ հոդվածից բխող դրական պարտավորությունները:

2000թ. մինչ 2008թ. աղբահանությունը և դրա վերամշակումը վստահվել է մասնավոր ընկերությունների, իսկ դրա հավաքումը համայնքում՝ հանրային կապիտալի մի շարք ընկերությունների: Այն փաստը, որ իտալական իշխանությունները հանրային ծառայությունը վստահել են երրորդ կազմակերպության կառավարմանը, բխելով 8-րդ հոդվածից նրանց չի ազատում զգոն լինելու պարտավորությունից: Ավելին, հանգամանքները, որ վկայակոչում է իտալական պետությունը, չեն կարող համարվել ֆորս մաժորային, որը միջազգային իրավունքում սահմանվում է հետևյալ կերպ. «անհաղթահարելի ուժ՝ վրա հասած անսպասելի իրավիճակից, որը դուրս է գալիս Պետության վերահսկողությունից և հանգամանքներից ելնելով նյութապես անհնարին է դարձնում միջազգային պարտավորությունների կատարումը»:

ա) Նյութական մաս. Նույնիսկ, ինչպես հաստատում է Կառավարությունը, եթե համարվում է որ, ճգնաժամի սուր փուլը տևել է միայն հինգ ամիս, 2007թ. վերջից մինչ 2008թ. մայիս, և չնայած պատասխանող պետության ընդունած դիրքորոշմանը, պարզ հասկանալի է, որ աղբահանության, դրա հավաքման և վերամշակման իրականացման համար իտալական իշխանությունների պարբերական ծառայություն մատուցելու տևական անկարողությունը խախտել է դիմումատուների մասնավոր կյանքի և

բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 10

Արտահայտվելու ազատություն _____

Եզրակացություն՝ խախտում (վեց ձայն ընդդեմ մեկի)

Փոխհատուցում սեռական բռնության զոհ դարձած երեխայի անձը թերթի հոդվածում բացահայտելու համար՝ խախտում չկա

բ) Դատավարական մաս. Դիմումատուները բողոք են ներկայացրել այն ենթադրյալ տեղեկատվության բացակայության համար ինչը իրենց թույլ կտար գնահատել սպառնացող վտանգը: Մինչդեռ, քաղ. պաշտպանության ծառայության կողմից պատվիրված ուսումնասիրությունների արդյունքները հայտնի են դարձել 2005-ին և 2008-ին: Այդ պահից ի վեր, իտալական իշխանությունները պարտավորություն են ձեռք բերել, զգուշացնել խնդրին առնչվող բնակչությանը, այդ թվում նաև դիմումատուներին, ովքեր շարունակում էին ապրել այդ շրջանում և ում իրական վտանգ էր սպառնում:

*Kurier Zeitungsverlag und Druckerei GmbH v. Austria
Կուրիեր Ցայթունգսվերլագը և Դրուքերեյ GmbH ընդդեմ Ավստրիայի
Թիվ 3401/07, Վճիռ 17.01.2012 [1-ին բաժանմունք]*

Փաստեր

Դիմումատու թերթը տպագրել է երկու հոդված Ս-ի գործի վերաբերյալ՝ մի երեխայի մասին, ով ենթարկվել է վատ վերաբերմունքի և սեռական բռնության իր հոր և խորթ մոր կողմից: Հոդվածները տպագրվել են վերջինիս քրեական դատավարության ընթացքում և պարունակում են գործի հանգամանքների մանրակրկիտ նկարագիրը՝ բացահայտելով Ս-ի անձը, իր հոր և խորթ մոր լրիվ անուններն ու լուսանկարները: Իր գործի նկատմամբ լրատվության մեծ ուշադրության հետևանքով Ս-ին ստիպված են եղել նորից տեղավորել հոգեբանական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված հիվանդանոց: Հետագայում, նա ներկայացրել է փոխհատուցում ստանալու պահանջ դիմումատու կազմակերպության դեմ իր անունը և գործի մանրամասները հրապարակելու համար: Նրա վերաքննիչ բողոքը բավարարվել էր, և դիմումատու կազմակերպությունը պարտավորվել էր վճարել 10,000 եվրո որպես

Եզրակացություն՝ խախտում չէ (միաձայն):

Դատարանը վեց կողմ և մեկ ձայնով հանգել է այն համոզման, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի խախտում՝ իտալական իրավական համակարգում վերաքննության բողոք ներկայացնելու ճանապարհների մասով, ինչը նրանց թույլ կտար ստանալ բարոյական փոխհատուցում:

Հոդված 41

Խախտման հաստատում, որը բավարար է բարոյական փոխհատուցում սահմանելու համար:



փոխհատուցումայն պատճառաբանությամբ, որ չկար Ս-ի անձի բացահայտման անհրաժեշտություն բացառապես նրա անձնական կյանքին վերաբերող գործի շրջանակներում, և դա կատարվել էր ներպետական օրենսդրության խախտմամբ:

ԻՐԱՎՈՒՆՔ

10-րդ հոդված

Գործը վերաբերում է դիմումատու թերթի խոսքի ազատության և Ս-ի՝ ինքնության պաշտպանության իրավունքների հավասարակշռությանը: Ս-ն հասարակական գործիչ չէր և լրատվության ուշադրությանն արժանացած հանցագործության տուժող ճանաչվելով չէր կարող հայտնվել հասարակության ուշադրության կենտրոնում: Ավելին, նույնիսկ եթե վիճարկվող հոդվածները վերաբերվում են հասարակական շահերին, այն փաստը, որ ոչ օրինազանցները, ոչ էլ տուժողը չեն եղել հասարակական գործիչներ, նշանակում է, որ իրենց ինքնության մասին տեղեկությունները անհրաժեշտ չեն եղել գործի մանրամասները հասկանալու համար: Դիմումատու թերթին արգելված չէր հրատարակել գործի մյուս բոլոր մանրամասները, բացառությամբ՝ Ս-ի ինքնությանը: Հանցագործության տուժողների ինքնությունն ենթակա է հատուկ պաշտպանության՝ հիմք ընդունելով նրանց խոցելի կարգավիճակը: Այդ պարտավորությունը Ս-ի գործում առավել կարևոր էր, քանի որ բռնության կատարման ժամանակ նա երեխա էր: Սեռական շահագործումից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան և Նախարարների կոմիտեի տարբեր հանձնարարականները կոչ են անում պետություններին միջոցներ

ծեռնարկել հանցագործության տուժողների ինքնությունը պաշտպանելու ուղղությամբ: Վերջապես, դիմումատու թերթի նկատմամբ կիրառված սանկցիան չի եղել անհամաչափ. փոխհատուցման չափը այդ հանգամանքներում եղել է ողջամիտ՝ մասնավորապես, հաշվի առնելով հոդվածների այն ազդեցությունը, որը դրանք կարող էին ունենալ Ս-ի վրա, ով արդեն իսկ ուներ լուրջ հոգեբանական խնդիրներ և ստիպված էր կրկին տեղափոխվել հիվանդանոց:

Եզրակացություն՝ խախտում չկա (միաձայն):

Թերթը և նախկին երդվյալ ատենակալ անդամը մեղավոր են ճանաչվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար և տուգանվել ատենակալների խորհրդակցության գաղտնիությունը խախտելու համար. անընդունելի է

*Seckerson and Times Newspapers Limited v. United Kingdom
Սեկերսոն և Թայմս Նյուսփեյփերս լիմիտիդ
ընդդեմ Միացյալ Թագավորության
Թիվ 32844/10 և թիվ 33510/10
Որոշում 24.01.2012 [4-րդ բաժանմունք]*

Փաստեր

Առաջին դիմումատուն այն դատավարության երդվյալ ատենակալների ավագն էր, որի արդյունքում դայակը մեղավոր էր ճանաչվել իր խնամքի տակ գտնվող երեխային այնքան ուժգին թափահարելու համար, որ մանուկը մահացել էր երկու օր անց: 2007թվականի վերջում՝ դայակի դատապարտումից հետո,


դիմումատուն *The Times* թերթին(երկրորդ դիմումատուն) հայտնեց իր լուրջ մտահոգությունը դատաքննության և դատապարտման վերաբերյալ: Հիմք ընդունելով նրա մեկնաբանությունները՝ *The Times*-ը հրապարակեց երկու հոդված: Մասնավորապես, հոդվածները պարունակում էին հետևյալ երկու մեջբերումները. «... համաձայնությունը ձեռք է բերվել երդվյալ ատենակալների ավագին ընտրելուց երեք րոպե հետո: Ձայները բաժանվեցին 10-ն ընդդեմ 2-ի՝ հիմնվելով ապացույցների վրա: Դրանից հետո հետադարձ ճանապարհ չկար» և «Ի վերջո գործի ելքը որոշել են ոչ մասնագետ տղամարդիկ և կանայք՝ կիրառելով ճիշտ և տրամաբանական մտածողության արհամարհելի թշնամուն՝ առողջ դատողությունը, որը հիանալի համոզման միջոց է»: Երկու դիմումատուներն էլ ճանաչվել են մեղավոր դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար համաձայն «Դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունք դրսևորելու մասին» 1981թ. օրենքի 8-րդ բաժնի, որը արգելում է երդվյալ ատենակալների քննարկումներին վերաբերող տեղեկությունների բացահայտումը: Առաջին դիմումատուն տուգանվել է 500 ֆունտի չափով: Երկրորդ դիմումատուն տուգանվել է 15,000 ֆունտի չափով և պարտավորվել է վճարել ծախսերը՝ շուրջ 27,000 ֆունտի չափով:

ԻՐԱՎՈՒՆՔ

10-րդ հոդված

Դատական քննարկումների գաղտնիության պահանջը նախատեսող կանոնները կարևոր դեր են խաղում դատական իշխանության հեղինակության և անաչառության

պահպանման գործում՝ նպաստելով ազատ և անկեղծ քննարկումների այն անձանց միջև, որոնք պետք է որոշում կայացնեն բարձրացված հարցերի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ երդվյալ ատենակալները ազատ բարձրաձայնեն գործի բոլոր հանգամանքների և ապացույցների վերաբերյալ իրենց տեսակետներն ու կարծիքները՝ առանց ինքնապարսավանքի՝ վախից դրդված, որ իրենց ընդհանուր կարծիքները և հատուկ մեկնաբանությունները կբացահայտվեն և կենթարկվեն քննադատության մամուլում: Անգամ երդվյալ ատենակալների քննարկումների բացարձակ գաղտնիությունը չի կարող դիտարկվել անհիմն՝ հաշվի առնելով, որ ցանկացած վերապահում անշուշտ կհանգեցնի անվստահության, ինչը կարող է խաթարել կանոնների կողմից հետապնդվող նպատակը: Սույն գործի համաձայն՝ հրապարակված մեկնաբանությունները բացահայտեցին երկար շարունակվող խորհրդակցության վաղ փուլում 10 երդվյալ ատենակալների արտահայտած կարծիքները, և «հետադարձ ճանապարհ չկա» մեջբերումը հաստատում է, որ նրանք մտադիր չէին փոխել իրենց կարծիքը: «Ճիշտ և տրամաբանական մտածողության արհամարհելի թշնամի» արտահայտության վկայակոչումն բացահայտում է անդամների մեծամասնության արտահայտած կարծիքների և հայտարարությունների վերաբերյալ առաջին դիմումատուի գնահատականը և մեղադրանք է պարունակում երդվյալ ատենակալների սխալ և ոչ տրամաբանական մտածելակերպի վերաբերյալ: «Հիանալի համոզիչ միջոց, առողջ դատողություն» արտահայտությունը բացահայտում է նրանց վերաբերմունքը ապացույցների նկատմամբ



և մասնավորապես այն, որ իրենք հիմնվել են առողջ դատողության այլ ոչ թե ճիշտ ու տրամաբանական մտածողության վրա: Դատարանը, համապատասխանաբար, ապացուցված է համարել, որ բոլոր այդ բացահայտումները խախտել են երդվյալ ատենակալների խորհրդակցության գաղտնիությունը: Հաշվի առնելով, որ հողվածների բովանդակության մեծ մասը չի վիճարկվել՝ Դատարանը բավարար է համարել, որ դիմումատուները կարող էին առանց որևէ խոչընդոտների դատավարության համապատասխան ժամանակահատվածում մասնակցել բժշկական փորձագիտական ապացույցի կիրառման հարցի քննարկմանը: Երկրորդ դիմումատուի նկատմամբ նշանակված տուգանքները և դատական ծախսերը աննշան չէին: Այնուամենայնիվ, Դատարանը, գործի հանգամանքներից ելնելով, տուգանքներն ու ծախսերը համարել է համաչափ՝ հաշվի առնելով երկրորդ դիմումատուի եկամուտները և կիրառված պատժամիջոցի զսպման ազդեցությունն երաշխավորելու անհրաժեշտությունը:

Եզրակացություն՝ անընդունելի է ակնհայտորեն անհիմն է):

ՀՈՂՎԱԾ 11

Հավաքների և միավորման ազատություն_____

Ցույցերի արգելքի օրինական հիմքերի հետադարձ ուժի վերացումը. խախտում

Patyi v. Hungary
Պապյին ընդդեմ Հունգարիայի

Թիվ 35127/08, Վճիռ 17.01.2012 [2-րդ բաժանմունք]

Փաստեր

2007թ. փետրվարին դիմումատուն դիմել է Բուդապեշտի ոստիկանության բաժին Խորհրդարանի շենքի դիմաց գտվող հրապարակում ցույց կազմակերպելու թույլտվություն ստանալու համար: Ոստիկանությունը հրաժարվել է քննարկել նրա դիմումը՝ այն պատճառաբանությամբ, որ 2006թ. սեպտեմբերի դեպքերից ի վեր այդ տարածքը հայտարարվել է «ռազմական գործողություններից անվտանգ գոտի»: Այդ տարածքը անվտանգության գոտի հայտարարելու մասին որոշման դեմ այլ անձի՝ Կ-ի կողմից ներկայացված բողոքը 4 տարի տևողությամբ դատաքննությունից հետո՝ 2010թ. նոյեմբերին բավարարվել էր՝ դատարանի որոշմամբ այն մասին, որ դա անհրաժեշտ չէր և անհամաչափ էր:

ԻՐԱՎՈՒՆՔ

11-րդ հոդված
(ա) Ընդունելիությունը (իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառում)

Կառավարությունը պնդում է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նա չի բողոքարկել քննության առարկա տարածքն անվտանգության գոտի հայտարարելու մասին սկզբնական որոշումը: Այնուամենայնիվ, Դատարանի համար համոզիչ չէ այն, որ Կ-ի կողմից հարուցված վարույթը կարող էր համարվել իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման տեսանկյունից պահանջվող

արդյունավետ միջոց: Հաշվի առնելով քաղաքական ցույցերի ակնթարթային բնույթը, որոնց ազդեցությունը կարող է ժամանակի ընթացքում արագորեն նվազել՝ դատաքննությունը, որը ավելի քան 4 տարի անց հանգեցրել է բարենպաստ որոշման, դժվար կարելի է դիտարկել արդյունավետ կամ բավարար:

Եզրակացություն՝ նախնական առարկությունները մերժվել են (միաձայն):

(բ) Գործի հանգամանքները

Դատարանը նշել է, որ ոստիկանությունը 2006թ.-ին հայտարարել է հրապարակը որպես ռազմական գործողություններից անվտանգ տարածք, և այն պահպանում էր այդ կարգավիճակը մինչ օրս: Այնուամենայնիվ, 2010թ. ներպետական դատարանները քննադատել են իշխանություններին, որ վերջիններս չեն զնահատել 2006թ. նոյեմբերից հետո այդ միջոցի անհրաժեշտությունն և համաչափությունը, և ոստիկանությունը հետագայում պարզել է, որ իսկապես այդ միջոցի համաչափությունը չի ապացուցվել: Հետևաբար այդ եզրահանգումներն վերացրեցին վիճելի միջոցի նկատմամբ հետադարձ ուժի իրավական հիմքերը, անկախ այն փաստից, որ այդ եզրահանգումները կայացվել են այլ անձի կողմից նախաձեռնված դատաքննության արդյունքում:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն)

Հոդված 41

2,400 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

(Տե՛ս նաև *Szerdahelyi v. Hungary*, գանգատ թիվ 30385/07, վճիռ 17 հունվար 2012թ.)


Հավաքների և միավորման ազատություն

Եկեղեցու աշխատակիցների արհմիության գրանցման մերժում. խախտում

Sindicatul "Pastorul cel Bun" v. Romania
Սինդիկատուլ "Pastorul cel Bun" ընդդեմ
Ռումինիայի
Թիվ 2330/09, Վճիռ 31.1.2012 [3-րդ
բաժանմունք]

Փաստեր

2008թ. ապրիլին երեսունհինգ եկեղեցականներ և Հռոմեական Ուղղափառ Եկեղեցու անդամներ որոշեցին ստեղծել արհմիություն: Ընտրված նախագահը դիմեց առաջին ատյանի դատարան՝ արհմիությունը որպես իրավաբանական անձ ճանաչելու և այն արհմիությունների գրանցամատյանում գրանցելու համար: Արքեպիսկոպոսի թեմի ներկայացուցիչը առարկում ներկայացրեց: Միության ներկայացուցիչը կրկնեց պահանջը, որը պաշտպանեց նաև հանրային դատախազությունը: 2008 թվականի մայիսին դատարանը բավարարեց միության պահանջը և հրամայեց գրանցել այն արհմիությունների գրանցամատյանում՝ դրանով իսկ ճանաչելով իրեն որպես իրավաբանական անձ: Արքեպիսկոպոսի թեմի ներկայացուցիչը բողոք բերեց այդ որոշման դեմ: 2008թ. հուլիսին կայացված իր վերջնական վճռում դատարանը բավարարեց բողոքը, չեղյալ համարեց առաջին ատյանի վճիռը և, ըստ էության



քննության ընթացքում մերժեց միությանը իրավաբանական անձ ճանաչելու և արհմիությունների գրանցամատյանում գրանցելու պահանջը:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 11

Հոգևորական և քահանայական անձնակազմը կատարում էին իրենց պարտականությունները Հռոմեական Ուղղափառ Եկեղեցու առջև անհատական աշխատանքայի պայմանագրերի հիման վրա: Նրանց աշխատավարձերը վճարվում էին մեծամասամբ պետական բյուջեից և նրանց վրա տարածվում էր համընդհանուր սոցիալական ապահովության ծրագիրը: Աշխատանքային պայմանագրի վրա հիմնված հարաբերությունները չէին կարող «ձևականացվեն» ազատվելով քաղաքացիական օրենքի բոլոր նորմերից: Հետևաբար, հոգևորականները, որոնք ավելի շատ հանդիսանում են Եկեղեցու աշխատակիցներ, չեն կարող բացառվել 11-րդ հոդվածի պաշտպանության շրջանակներից:

Դիմումատու միության գրանցման մերժումը հիմնված է եղել ներպետական օրենսդրության վրա: Այնքանով, որքանով մերժումը ուղղված էր Եկեղեցու աշխատողների արհմիությունների ստեղծմանն առնչվող օրենքի և իրավակիրառ պրակտիկայի միջև հակասությունը կանխարգելելու, այն նպատակ ուներ պահպանելու հասարակական կարգը, ինչը ներառում է նաև հոգևոր միավորումների ազատությունն ու ինքնավարությունը:

Քաղաքացիական դատարանները իրավասու էին եղել առաջնորդվել

արհմիությունը որպես իրավաբանական անձ ճանաչելու մասին պահանջի օրինականությամբ:

Ներպետական դատարանը մերժման հիմքում դրել էր Քրիստոնեական Ուղղափառ ավանդույթների պահպանման անհրաժեշտությունը, դրա հիմնական դրույթները և որոշման կացայումն կարգավորող կանոնական իրավունքի նորմերը, սահմանելով, որ օրինականորեն անհրար էր հոգևորականների համար արհմիություն կազմել քանի դեռ նրանք զբաղեցնում են ղեկավար պաշտոնների իրենց եկեղեցական մարմիններում: Այնուամենայնիվ, դատարանը դիտարկեց, որ արհմիությունների կարգավիճակները ցույց են տալիս, որ դրանք նպատակ ունեին ամբողջովին հետևել և կիրառել քաղաքացիական օրենսդրության դրույթները և հոգևորական կանոնները, ներառյան եկեղեցու կանոնադրությունը և կանոնները: Միության պահանջները առնչվում էին բացառապես եկեղեցու կողմից վճարվող աշխատողների տնտեսության, սոցիալական և մշակութային իրավունքների և շահերի պահպանմանը: Հետևաբար, միության ճանաչումը չէր խոչնդոտի կրոնական դավանանքների կամ դրանց արտահայտման միջոցների օրինականությանը: «Սոցիալական ծայրահեղ կարիք» չափանիշը այսպիսով չէր ապահովվել սույն գործում: Դատարանը չէր սահմանել, որ արհմիության կարգավիճակի մեջ նշված իր ծրագիրը, կամ դրա անդամների կողմից ընդունված դիրքորոշումները հակասում էին «ժողովրդավարական հասարակությանը», և ավելի քիչ, սակայն վտանգ էին ներկայացնում ժողովրդավարությանը:

Միջամտությունը արդարացնելու համար ներպետական դատարանի կողմից տրված պատճառաբանությունները բացառապես

կրոնական հիմնավորում ունեին: Դատարանը չի քննել աշխատանքային պայմանագրի անդրադարձները գործատու-աշխատող հարաբերությունների վրա, տարբերակումը հոգևորականների և եկեղեցու վարժու աշխատողների միջև կամ խնդիրը թե արդյոք հոգևորականների միությանը անդամակցելը արգելող կանոնները համապատասխանում էին ներպետական և միջազգային նորմերին, պահպանելով արհմիությանը անդամակցելու աշխատողների իրավունքները: Այնուամենայնիվ, այս խնդիրները առանձնապես կարևոր էին սույն գործում: Որպես այդպիսին, նրանք վերջնական պատասխանի էին սպասում և պետք է տեղյակ պահվեին քննվող հարցի լուծման մասին: Ներպետական դատարանը արհմիությունը գրանցելու մերժման հիմքում դրել էր նաև Ուղղափառ Եկեղեցու Կանոնադրության դրույթները, որոնք ուժի մեջ էին մտել 2008 թվականին, այսինքն, արհմիության անդամների կողմից Եկեղեցու հանդեպ իրենց պարտականությունների ընդունումից հետո: Չնայած այս գործի հիմքերը սովորական չէին, մասնավորապես պատմության մեջ ուղղափառ հավատքի ընդունած դիրքորոշման և պատասխանող պետության ավանդույթների տեսանկյունից, դա ինքնին չի կարող արդարացնել միջամտությունը, հատկապես երբ դիմումատու արհմիությունը ոչ մի կերպ չէր ձգտում վիճարկել այդ դիրքորոշումը և Ուղղափառ Եկեղեցու աշխատողների արհմիությանը միանալու իրավունքները արդեն իսկ ճանաչվել էին առնվազն երկու դեպքերում ներպետական դատարանների կողմից: Քանի դեռ հայտնի է, որ ճանաչումը ավելի վաղ է եղել քան Ուղղափառ Եկեղեցու կանոնադրության ուժի մեջ մտնելը, հաստատված էր, որ երկու միություններ

ստեղծվել էին Ուղղափար հոգևորականության ներքո, առանց դա անօրինական կամ ժողովրդավարությանը հակասող ճանաչվելու: Այդ փաստերի տեսանկյունից, ներպետական դատարանի կողմից ընդունած հիմքերը բավարար չեն դիմումատու արհմիության գրանցման պահանջի մերժման համար:

Համապատասխանաբար, «սոցիալական ծայրահեղ կարիքի» կամ բավարար պատճառների բացակայության դեպքում, դիմումատու միության գրանցման մերժման պես կտրուկ միջոցը անհամաչափ էր հետապնդող նպատակի հետ, և հետևաբար անհրաժեշտ չէր դեմոկրատական հասարակությունում:

Եզրակացություն՝ խախտում (հինգ ձայնը երկուսի դեմ)

Հոդված 41

10,000 եվրո՝ նյութական և ոչ նյութական վնասների փոխհատուցում:

ՀՈԴՎԱԾ 35

Հոդված 35 § 1

Իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոց. Մոլդովայի Հանրապետություն _____

Դատական ընթացքի տևողության և չկատարված վճիռների մասով N 87 Օրենքի ներքո փոխհատուցման պահանջ՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց



Balan v. Moldova
Քալանն ընդդեմ Մոլդովայի
Թիվ 44746/08, Որոշում 24.1.2012
[3-րդ բաժանմունք]

Փաստեր

2004թ.-ին դատարանը երրորդ կողմին պարտավորեցրեց հատուցել պատահարի արդյունքում դիմումատուի կրած վնասները: 2008թ.-ին Եվրոպական դատարան ներկայացրած իր դիմումում դիմումատուն բողոքում էր, որ իշխանությունները չեն կատարել վնասների հատուցման պահանջը: 2011թ.-ի սեպտեմբերին պատասխանող Կառավարությունը տեղեկացրեց Դատարանին, որ ի պատասխան *Olaru and Others v. Moldova* (թիվ 476/07 և այլն, 2009թ. հուլիսի 28, տեղեկատվական գրառումներ թիվ 121) պիլոտային վճռում արձանագրված Դատարանի ցուցումների՝ ներպետական վերջնական վճռի չկատարման և դատական ընթացքի տևողության խնդիրների առնչությամբ N 87 Օրենքով դատական պաշտպանության նոր իրավական միջոց է նախատեսվել: Հետևաբար, Դատարանը քննության է առել, թե արդյոք դիմումատուն, ով չի օգտվել իրավունքի պաշտպանության այդ նոր միջոցից, կատարել է իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու իր պարտականությունը:

ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 35 § 1

Դատարանն ընդունում է, որ N 87 Օրենքը սկզբունքորեն ձևակերպված է այնպես, որ վճռի կատարումն ուշացնելու հարցը լուծվի արդյունավետ և իմաստավորված կերպով՝ հաշվի առնելով Կոնվենցիայի պահանջները:

Քանի դեռ ներպետական դատարանները չեն ձևավորել որոշակի կայուն պրակտիկա Օրենքի ներքո՝ Դատարանն այս փուլում հիմքեր չունի կարծելու, որ իրավական պաշտպանության նոր միջոցը չի կարող տրամադրել դիմումատուին արդյունավետ և բավարար փոխհատուցում կամ չի կարող առաջարկել հաջողության հասնելու ողջամիտ հեռանկարներ:

Եթե նույնիսկ իրավական պաշտպանության նոր միջոցը հասանելի է եղել դիմումը Դատարան ներկայացնելուց հետո, սա այն դեպքերից է, երբ նպատակահարմար է և արդարացված պահանջել դիմումատուից օգտվել այդ միջոցից, քանի որ առաջին հերթին իրավական պաշտպանության միջոցը ներկայացվել է ի պատասխան պիլոտային վճռի, և այն պարագայում, երբ դիմումատուները վիճարկում են վերջնական վճռի չկատարումը և դատական ընթացքի տևողությունը, իրավունքի պաշտպանության նոր միջոցի օգտագործումը կբխի նմանատիպ վճիռների բնույթից և տրամաբանությունից, և երկրորդ՝ N 87 Օրենքի անցումային դրույթները արտացոլում են Մոլդովայի իշխանությունների մտադրությունը տրամադրել ներպետական փոխհատուցում անձանց, ովքեր մինչև օրենքի ուժի մեջ մտնելը դիմել են Դատարան, և դրանով իսկ գործել են օժանդակության բարձրագույն սկզբունքին համաձայն:

Բացառությամբ առանձնահատուկ հանգամանքների, որոնք բխում են արդարության և արդյունավետության անհրաժեշտությունից, Դատարանը սկզբունքորեն կպահանջի, որ պիլոտային վճռից հետո N 87 Օրենքի շրջանակներում բոլոր նոր գործերը սկզբից ներկայացվեն ներպետական դատարաններ: Այդ մոտեցումն, այնուամենայնիվ, կարող է

ապագայում ենթարկվել վերանայման, մասնավորապես՝ ելնելով ներպետական դատարանների ունակությունից N 87 Օրենքի ներքո ստեղծելու Կոնվենցիայի պահանջներին համահունչ դատական նախադեպ:

Եզրակացություն՝ անընդունելի (իրավական պաշտպանության ներպետական միջոցներն չսպառում):

ՀՈԴՎԱԾ 46

Պիլոտային վճիռներ: Ընդհանուր միջոցառումներ_____

Պատասխանատու Կառավարությունը պարտավոր է ընդհանուր բնույթի միջոցառումներ ձեռնարկել կալանքի տակ պահելու վայրերում պայմանները մեղմացնելու համար

Ananyev and Others/et autres v. Russia
Անանևը և այլոք ընդդեմ Ռուսաստանի
Թիվ 42525/07, 60800/08
Վճիռ 10.01.2012 [1-ին բաժանմունք]

Փաստեր

Գործը վերաբերում է 2005-2008թթ. միջև ընկած ժամանակահատվածում մինչև դատաքննությունը կալանքի տակ պահելու տարբեր վայրերում գտնվող դիմումատուների նախնական կալանքի պայմաններին: Կոնվենցիայի 3-րդ և 13-րդ հոդվածների խախտում ճանաչելով՝ Դատարանը շարունակեց գործի քննությունը Կոնվենցիայի 46-րդ հոդվածի ներքո:


ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 46

Կալանքի ոչ բավարար պայմանները Ռուսաստանում դարձել էին հերթական կառուցողական խնդիր, որի արդյունքում սկսած *Կալաշնիկովի*¹ վճիռից ավելի քան 80 վճիռներով Դատարանը ճանաչել է 3-րդ և/կամ 13-րդ հոդվածների խախտումներ: Հավելյալ 250 նմանատիպ գործեր սպասում են քննության:

Անդրադառնալով առաջին կետին՝ նշենք, որ Եվրոպայի խորհրդի բոլոր մարմինները միառժամանակ նշել են, որ գործերի կուտակման խնդրի համար ազատությունից զրկված բանտարկյալների քանակի կրճատումը ամենաճիշտ լուծումը կլինի: Դատարանը նաև իր բազմաթիվ վճիռներում նշել է, որ կալանավայրերում ազատությունից զրկելը պետք է լինի ոչ թե կիրառելի նորմ, այլ՝ բացառություն և տվյալ միջոցի ընտրության վերջին տարբերակը: Դատարանը նաև նշել է ռուսական դատական համակարգի անգործությունը, որը վերաբերում է առանց համապատասխան արդարացման նախնական կալանքի չափազանց երկարատև լինելուն (կալանքի հրամանների վերաբերյալ դիմումների տոկոսը չափազանց բարձր էր՝ նախնական դիմումների համար՝ 90%, նորացված դիմումների համար՝ 98%): Դատարանը նաև համարել է, որ ռուսական դատախազներին պետք է պաշտոնապես խրախուսել, որպեսզի շարունակեն կրճատել այն կալանքի հրամանների համար կազմած դիմումները, բացառությամբ ծանր հանցագործությունների, որոնք ներառում են դաժան հանցագործություններ: Ինչևէ, հետևողականության և երկարատև

¹ *Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 47095/99, 15 հուլիսի 2002, թիվ 44 նախադեպային տեղեկատվության



միջոցառումների շնորհիվ հնարավոր է արդյունավետորեն կանխել կուտակումը կալանավայրերում, Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու միջոցով Կոնվենցիայի 5§3 հոդվածին համապատասխան: Այսպիսի յուրաքանչյուր փոփոխության հետ միասին պետք է նաև արդյունավետ միջոցառումներ իրականացնել՝ կապված դատական պրակտիկայի փոփոխությունները իմպլեմենտացնման հետ:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, նշենք, որ պետք է իրականացվի կուտակումը կանխելու և կրճատելու համար նախնական միջոցառումներ: Դատարանը նշել է, որ, չնայած նյութական պայմանների նշանակալի բարելավումներին, մի քանի տարի շարունակ չափանիշներին չհամապատասխանող պայմաններ են կիրառվել: Վերջինս անհրաժեշտություն առաջացրեց արագացնել հավելյալ իրավական երաշխիքների ապահովումը, որպեսզի կուտակումը կանխվի կամ հնարավորինս կրճատվի, այն քրեակատարողական հիմնարկներում, որտեղ այդ երևույթը շարունակվում էր և երաշխավորվի այն անձանց իրավունքների արդյունավետ հարգանքը, ովքեր քրեակատարողական հիմնարկներում գրկված էին ազատությունից: Համապատասխան միջոցառումները ներառում են՝ իշխանությանը ապահովել քրեակատարողական հիմնարկի ղեկավարին յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկի առավերագույն և գործառնական դերի համար, որպեսզի նա իրավասու լինի մերժելու հավելյալ կալանավորներին ընդունելը: Այստեղ հիմնարկի ղեկավարի իրավասությունները կգերազանցեն նրա՝ որպես կանոն

սահմնաված լիազորությունները և այն միջոցառումների հետ միասին, որոնք ներկայացվել են Լեհաստանում (տե՛ս *Լաֆակն ընդդեմ Լեհաստանի* և *Լոմինսկին ընդդեմ Լեհաստանի* Դատարանի որոշումները) կիրականացվեն հավելյալ միջանկյալ միջոցառումներ: Նման միջոցառումների համար բնորոշ հատկանիշ կլինի այն, որ չափանիշներին չհամապատասխանող պայմաններով յուրաքանչյուրի կալանավորումը պետք է լինի կարճ և որոշակի տևողությամբ, լինի դատական վերահսկողության ներքո և փոխհատուցման համար գանգատվելու հնարավորություն ստեղծի: Պետք է նաև քննարկվի կալանավորներին ազատ արձակելու տարբերակը, այն դեպքում եթե դատարանով որոշված կալանքի ժամկետը արդեն ավարտին է հասնում կամ եթե բացակայում է կալանքի կարիքը:

Ինչ վերաբերում է 13-րդ հոդվածի հարցին, պատասխանող Պետությունից պահանջվել է առանց վարանումների ստեղծել կանխիչ և փոխհատուցման ենթակա ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ: Կանխիչ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները պետք է հնարավորություն տային կալանավորներին ապահովելու իրենց գանգատների արագ և արդյունավետ քննությունն անկախ լիազորված մարմնի կամ այն դատարանի կողմից, որն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ իրականացնելու համար հրաման տալու իրավասություն ուներ: Փոխհատուցմանն ուղղված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները պետք է ապահովեն իրավիճակի վերականգնում, ներառյալ ազատագրվման ժամկետի կրճատում կամ դրամական փոխհատուցում, այն չափով, որը, որ

Դատարանը նման գործերի համար շնորհում է այն կալանավորներին, որոնք տևական դատաքննությունների ժամանակ պահվել են անմարդկային կամ նվաստացուցիչ պայմաններում: Պարտադիր ժամանակահատվածը, որի ընթացքում մատչելի կլինեն կանխիչ կամ փոխհատուցմանն ուղղված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները, պետք է առաջարկվի համագործակցելով Նախարարների կոմիտեի հետ վեց ամսվա ընթացքում այն օրվանից, երբ Դատարանի վճիռը վերջնական կդառնա:

Վերջապես, չպետք է հետաձգվի այն ընթացիկ դիմումների քննությունը, որոնց իրավունքի էությունից բխում է, որ անձը չպետք է ենթարկվի անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի: Վերջիններիս տևական քննությունը սովորական հիշեցում կլինի Կառավարության համար իր Կոնվենցիոն պարտավորությունների վերաբերյալ: Կառավարությանը պահանջել են արագացնել այն անհատական գործերի կարգավորումը, որոնք գտնվում են Դատարանի քննության ներքո 12 ամսվա ընթացում այն օրվանից, երբ Դատարանի վճիռը դարձել է վերջնական կամ, երբ նման դիմումները Կառավարության ուշադրությանն են արժանացել:

Ընդհանուր միջոցառումներ_____

Դատարանի արդյունավետ մատչելիությունն ապահովելու համար, Պատասխանող Պետությունից պահանջվել է իրականացնել ընդհանուր միջոցառումներ, այն անձանց համար, որոնք ցանկանում են վերականգնել իրենց իրավական կարգավիճակը:

Stanev v. Bulgaria

*Ստանևն ընդդեմ Բուլղարիայի
Վճիռ 36760/06, 17.1.2012 [ՄՊ]*

(տե՛ս՝ 6§1 հոդված)

**ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀՈԴՎԱԾ 1-ԻՆ**

Գույքի անարգել օգտագործումը_____


**Դիմումատուների թոշակների կրճատումը՝
կենսաթոշակային սխեմայի
փոփոխության արդյունքում**

Torri and Others v. Italy

*Տորին և ուրիշներն ընդդեմ Իտալիայի
Թիվ 11838/07 և 12302/07
Որոշում 24.1.2012 [2-րդ բաժանմունք]*

Փաստեր

Դիմումատուները պետական հիմնարկի քաղաքացիական ծառայողներ էին, որոնք ծերության թոշակի վճարումներ էին կատարում Իտալական թոշակային ֆոնդ: 1992թ. այն հիմնարկը, որտեղ նրանք աշխատում էին կանոնադրությամբ սահմանված կարգով լուծարվեց և նրանք հնարավորություն ձեռք բերեցին կամ «ծառայության ավարտի» վճարների իրավունք, կամ քաղաքացիական այլ ծառայությունում նվազագույն աշխատավարձով նոր աշխատանք ստանալու իրավունք: Ինչ վերաբերում է նրանց թոշակային ներդրումներին, դիմումատուները մի քանի հնարավորություն ունեին, ներառյալ այն վճարումները



միավորելու հնարավորության, որոնք նրանք կատարել էին իրենց նոր աշխատանքի թոշակային ֆոնդ վճարած ներդրումների հաշվին: Նրանք այս տարբերակը ընտրեցին, այն հույսով, որ համաձայն գործող պրակտիկային, նրանց հավելյալ պետք է վճարեին, բայց ոչ իրենց թոշակների հաշվին: Ինչևէ այդ պրակտիկան վերջիվերջո փոխվեց և նմանատիպ գերավճարները սահմանափակվեցին այն մարդկանցով, որոնք քաղաքացիական ծառայությունը թողել էին որոշակի ամսաթվից առաջ, մինչդեռ դիմումատուները, որոնք պարտք էին իրենց գործատուներին, չէին դասվում նրանց շարքին: Դիմումատուները այնուհետև հայց ներկայացրեցին գերավճարների համար, սակայն նրանց հայցը մերժվեց, այն բանից հետո, երբ Վճարելի դատարանը (Consiglio di Stato) իր դատական պրակտիկան փոխեց:

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված
Այսպիսով, դիմումատուները զանգատ են բարձրացրել ներպետական դատարանների ներպետական իրավունքի մեկնաբանման վերաբերյալ: Դատարանը նշել է, որ դա կամայական չի եղել և վկայակոչել է, որ իրավագիտության փոփոխությունը կատարվել է ներպետական դատարաններին վերապահված իրավասության շրջանակներում: Քննարկվող իրավունքը հստակորեն սահմանում էր, որ ներդրումների վերադարձը վերաբերում էր միայն որոշակի անձանց շրջանակների, որոնց շարքին դիմումատուները չէին դասվում: Ավելին, այսպիսիով դիմումատուները զանգատ էին բարձրացրել իրենց սեփականության անհամաչափ միջամտության վերաբերյալ: Դատարանը հետազոտել է այն փաստը, որ

դիմումատուների սոցիալական ապահովագրության ծրագրից օգուտներ ստանալու իրավունքը չի խախտվել այն իմաստով, որ նրանց թոշակի իրավունքի էությունը արդեն վերացել էր: Դիմումատուներին իրենց թոշակների վճարներից ամբողջությամբ չեն զրկել և նրանք իրականում պատշաճ թվաբանական մանրամասներ չեն ներկայացրել, որով կերևար իրենց թոշակների կրճատման չափը: Հաշվի առնելով Պետության ընդարձակ գնահատման չափանիշները, որոնք կարգավորում են թոշակային համակարգը և հետապնդվող իրավաչափ նպատակը, մասնավորապես՝ համերաշխության սկզբունքը, դիմումատուներին չեն ստիպել կրելու անհատական արտակարգ բեռը:

Եզրակացություն՝ անընդունելի (անհիմն):

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համակցությամբ.

Դիմումատուներին, համեմատած նրանց հետ ովքեր մինչև ներպետական դատարանների դատական պրակտիկայում կատարված փոփոխությունները հետ են ստացել իրենց նրեդրումները, այլ կերպ են վերաբերել: Ինչևէ համարելով, որ այս փոփոխությունը իրավաչափ է եղել և դրա հետևանքները և վերաբերմունքի մեջ ակնհայտ տարբերությունը հանդիսանում է Պետության իրավասությունը, այդ իսկ պատճառով այն կարող է օբյեկտիվորեն արդարացված համարվել: Ցանկացած պարագայում դիմումատուները չէին կարող պահանջել, որ իրենց նկատմամբ կիրառվի իրենց նախկին աշխատակիցների

անալոգիան, որոնք նոր աշխատանքի փոխարեն ընտրել են թոշակի անցնել:

Եզրակացություն՝ անընդունելի (ակնհայտորեն անհիմն):

ԹԻՎ 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾ 2-ՐԴ

Ազատորեն տեղաշարժվելու իրավունք

Miazdzyk v. Poland
Միազդզիկն ընդդեմ Լեհաստանի
Թիվ 23592/02, Վճիռ 24.1.2012
[4-րդ բաժանմունք]


Փաստեր

2004թ. դիմումատուին Լեհաստանում կալանավորում են կազմակերպված հանցավոր խումբ ղեկավարելու, բազմաթիվ խարդախությունների, գողության և գողացված ապրանքների իրացման մեղադրանքներով: Մի տարի անց նրան գրավով ազատ են արձակում և հրամայում են անորոշ ժամկետով երկրից չբացակայել: Նրա անձնագիրը պետական մարմինների կողմից բռնագրավվում է: Նրա փաստաբանը կիրառված միջոցը վերացնելու վերաբերյալ իննը պահանջ է ներկայացրել՝ պատճառաբանելով դիմումատուի վատառողջ լինելը և իր ընտանիքի հետ կապի բացակայությունը, որոնք ապրում էին Ֆրանսիայում: Փաստաբանի այդ պահանջները մերժվել են՝ պատճառաբանելով, որ եթե դիմումատուին

թույլատրվեր հեռանալ երկրից, ապա դա կխոչընդոտեր քրեական գործողությունների պատշաճ իրականացմանը: Վերջապես՝ 2011թ. հունվարին կանխիչ միջոցները վերացվեցին, և դիմումատուն հեռացավ Ֆրանսիա: Դիմումատուն ներկայացավ Լեհաստանում անցկացվող համապատասխան դատական լուսններին և վերջիվերջո ձեռք բերեց դատական լուսները իր բացակայությամբ անցկացնելու դատարանի թույլտվությունը: Եվրոպական դատարանի վճռի ընդունման օրը ընդհանուր իրավասության դատարանում քրեական գործողությունները դեռ շարունակվում էին:

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 4 արձանագրության 2-րդ հոդված.
Դատարանը Իտալիայի դեմ բնակության վայրից մեկ այլ տեղ հեռանալու արգելքի վերաբերյալ նախկինում մի շարք որոշումներ է կայացրել: Այդպիսի գործերից մեկում՝ Լուորդոյի գործով, Դատարանը այդպիսի միջոցը անհամաչափ համարեց, քանի որ սնանկացման գործընթացը տևել է ավելի քան տասնչորս տարի: Դիմումատուի պարագայում կանխիչ միջոցը կիրառվել է հինգ տարիների և երկու ամսվա ընթացքում: Ինչևէ, սահմանափակման տևողությունը քրեական գործողությունների պատշաճ իրականացման վերաբերյալ ընդհանուր շահերի և դիմումատուի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի միջև գոյություն ունեցող արդար բալանսի հարցի որոշման համար ինքնին հիմք չի կարող համարվել: Պետք է հաշվի առնել, որ կանխիչ միջոցի ամբողջ ընթացքում դիմումատուի գործով որևէ ընդհանուր իրավասության դատավճիռ չի կայացվել և որ գործողությունների ամբողջ ընթացքում այդ կանխիչ միջոցի



կիրառումը չի կարող արդարացվել գործի փաստական և կազմակերպական բարդությամբ: Ավելին՝ դիմումատուն ազգությամբ ֆրանսիացի էր և նրա ընտանքիը և իր բիզնեսը գտնվում էին Ֆրանսիայում: Այդ իսկ պատճառով նրա իրավիճակը չի կարող համեմատվել անձի՝ իր սեփական երկրում, ազատ տեղաշարժվելու սահմանափակման հետ: Վերջապես, երբ կանխիչ միջոցը վերջնականապես վերացվել էր, լեհական դատարանները համաձայնել են դատաքննությունը դիմումատուի բացակայությամբ վարել: Նման իրավիճակում դիմումատուի նկատմամբ որոշակի ժամանակահատվածով տեղաշարժման սահմանափակումը անհամաչափ է եղել:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41

4,000 եվրո՝ ոչ նյութական վնասի փոխհատուցում, նյութական վնասի փոխհատուցման գանգատը մերժվել է:

(տե՛ս՝ նաև *Luordon v. Italy*, թիվ 32190/96, 17 հուլիս 2003թ., *Prescher v. Bulgaria*, թիվ 6767/04, 7 հունիս 2011թ., և *Riener v. Bulgaria*, թիվ 46343/99, 23 մայիս 2006թ.)